

Մ. ՓԻՐՈՒՄՅԱՆ



**ՓՈԶՐԻԿ**  
ԵՄՄԱՆ

ՊԵՏԶՐԱՏ

891.994

4-67

Մ. ՓԻՐՈՒՄՅԱՆ

2011-07

891.9915

4-67  
սի

# ՓՈՔՐԻԿ ԵՄՄԱՆ

Պ Ե Տ Տ Ր Ա Տ  
ՀԼԿՅԵՄ ԿԿ ԿԻՑ ՄԱՆԿԱՊԱՏԱՆԵԿԱԿԱՆ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԲԱԺԻՆ  
Յ Ե Ր Ե Վ Ա Ն  
1939



1806  
39

Յերկաթուղային հանգույցից հինգ կիլոմետր հե-  
ռու կա մի փոքրիկ և արդեն խարխլած տնակ: Տնակի  
պատերը ճաքել են մի քանի տեղով, իսկ հոգնած  
կտուրը թեքվել ու հենվել է մի թևի վրա: Այս տնա-  
կը՝ աշխատանքը թողած, ալեհեր և արդեն աչքի լույ-  
սից զուրկ սլաքավար Պավելի տնակն է, վորտեղ ապ-  
րում են ինքը՝ Պավել պապը, նրա վորդի Անդրեյն ու  
12 տարեկան կապտաչյա թոռնիկը՝ Եմման:

Տնակի առջևից անցնում են ու անծայրածիր դաշ-  
տերի հեռուներում կորչում յերկու զույգ յերկաթ-  
գծեր: Տնակի յեակում տարածվում է փոքրիկ անտա-  
ռը: Նրա դալար ծառերն այնպես անխնա կտրատել ու  
տարել են, վոր կարծես ցանկացել են անտառակը  
թփուտների վերածել: Չախ կողմում ձգվում է լայն  
ու խաղաղ գետը, վորի ջրերը պլպլում են արևից,  
իսկ զիչերը խաղ են անում լուսնի արծաթյա շողերի  
հետ:

Խաղաղ է ու անաղմուկ շրջապատը: Յերբեմն  
միայն զորատար դնացքներն են անցնում, վորոնց  
պատուհաններից յերևում են սպաների ուսադիրներն  
ու զինվորների շինելները: Յերկաթգծից հեռու,  
խճուղի չմանելով, պարկն ուսերին ու գլխահակ, յեր-  
բեմն անցնում են հատ ու կենտ գեղջկուհիներ ու ծեր  
գյուղացիք:

1919 թիվն է. աչնան ուչ որերից մեկը, յերբ  
մարդ սրսփում է առավոտյան ցրտից, ցերեկը սիրով

կոնսակն և դեմ անուամ արեգակի շողերին, իսկ մայրամուտին շտապում և տուն:

Մութը վաղուց և նստել անտառակի հատ ու կենտ ծառերին ու թփուտներին, դաշտերի դեղնած խոտերին: Մայրամուտից հետո խոնավ ցուրան զգացնել և տալիս իրեն: Չնայած ժամանակի ուշ լինելուն, սրապն ու Եմման շարունակում են լուռ նստած մնալ ակացիաների տակ, Վորոնց փոքրիկ ու դեղնած տերևներն որորվելով մեղմ քամուց, թափվում են նրանց շորերի վրա և սողալով ներքև՝ ծածկում դետինը:

Պապիկի կնճռոտ ձախատին նստել և հոգսը ալեհեր միբուրը զգողված է: Նրա խավար աչքերը փաղաքանք են արտահայտում, յերբ հառած են թոռնիկի վրա, իսկ խավարին նայում են ցասկոտ ու կույրի լարված զգոնությամբ:

Դալուկ և Եմմայի դեմքը սակայն նրա դանդուր մաղերի խոպոպների տակից նայող զույգ աչքերն ասում են, վոր նա մտածում և և մտածում կենտրոնացած:

Ո՛ր, նա մտածելու շատ բան ունի:

Չե՞ վոր պետք է հոգ տանել կույր պապի մասին, պետք է ցախ հավաքել ձմեռվա համար, տունը մաքրել, ջուր բերել, դնալ մոտակա դյուղն ուտելիք ձարել...

Յերբեմն միտքն է ընկնում նաև դպրոցը:

Դպրոց:

Սակայն Եմման, դասարանի այդ առաջադեմ աշակերտուհին, դպրոցի մասին այժմ չի ել մտածում: Ասենք դպրոցն ել ահա մի տարի յե փակ է:

— Եմմա, արդեն ուշ է ու քնելու ժամանակ, — ասաց պապն, ու փնտռելով Եմմայի ձեռքը՝ վեր կացավ:

Կտրվելով իր մաքերից ու կրկին անգամ դիտելով հեռվում պլպլացող քաղաքի աղոտ լույսերը, Եմման պապին առաջնորդելով՝ տուն մտավ:

Վաղուց և իրիկուններն այս տանը լույս չի վառ-

վել: Նավթ չկա, իսկ ձեթի մի շիչ սրաշարն ել պետք և պահել կարտոֆիլ ու ձեթով ապուր յեփելու համար:

Յերկուսն ել տարված են իրենց խոհերով և կարծես չուզենալով խանդարել մեկ-մեկի՝ լուռ են: Պապը վաղուց ի վեր, իսկ Եմման վերջին ամիսների ընթացքում նավթ չլինելու և լամպ չվառելու պատճառով վարժվելով մութին, մոտեցան սեղանին, անխոս կերան սեղանի վրայի մի քանի սառը կարտոֆիլներն ու պառկեցին քնելու:

— Գիշեր բարի, բալի՛կ:

— Գիշեր բարի, պապի՛կ:

Եմման վերմակը քաշեց մինչև ուտերը, դուրեկան ջերմություն զգաց անկողնում, սակայն յերկար ժամանակ չկարողացավ քնել:

Այնքա՛ն, այնքա՛ն շատ պատկերներ ու դեմքեր անցան նրա բաց աչքերի առջևից և խառնվեցին իրար, այնքան շատ մարդկանց խոսակցությունները լսեց ու ինքը խոսեց նրանց հետ...

Եմման չեր մտածում քնել. սակայն քունն աննկատելի յեկավ, և տարավ նրան յերազների աշխարհը:

Եմմայի համար սովորական բան էր հոր հաճախակի բացակայությունը: Նա միայն զարմանում էր, վոր հայրն այժմ վոչ թե կանոնավոր կերպով յերեք որը մի անգամ և տուն գալիս, այլ գալիս և յերբեմն 4-5 որը մի անգամ, իսկ յերբեմն ել շաբաթն անցնում և և նա չկա: Նրա համար արտասովոր էր նաև այն, վոր հայրն այժմ համարյա միշտ ընկերներով և գալիս, անպայման մութն ընկնելուց հետո, իսկ առավոտները յերբ զարթնում է ինքը, հայրն իր ընկերների հետ արդեն դնացած են լինում:

— Ինչո՞ւ հայրիկն ելառաջի պես տանը չի մնում յերբեք, — նեղացած ու կարոտով հարցնում է Եմման պապիկին:

— Գործը չա՛տ է, բալիկ, աշխատանքը մե՛ծ,

մարդիկ ստեղծվել են աշխատանքի համար, — խորհրմաստ ասում էր պապիկը և Եմմային մխիթարելու համար ավելացնում, — Ժամանակն է՛ն չի, այ, աշուն է հիմա, ձմեռը կգա նրա յետևից և հայրդ հաճախակի տուն կգա. քեզ ել լավ-լավ բաներ կրերի:

— Գարնանն ել այդպես էյիր ասում... «ամառը կգա, աշունն ել յետևից ու...»

Եմմայի շրթունքները կախ են ընկնում և աչքերը խոնավանում են: Վորպեսզի լաց չլինի, նա փախչում է դուրս, մի գործ ճարում, զբաղվում գրանով ու այդպիսով խեղդում իր կոկորդով վեր բարձրացող հեծկլտանքը:

Նա ինքն իրեն ասում է.

— Յես փոքր չեմ. լացը փոքրերին է սազական:

Ու ել լաց չի լինում:

Սակայն նա շատ, շատ անգամ է տխրում, պապիկի հեքյաթներն ու պատմությունները «Վախկոտ իշխանի ու հնարագետ վարպետի մասին», «Գայլերի ու քաջ վորսորդի» և ուրիշ շատ բաների մասին թեև հետաքրքրական են, սակայն այժմ նրան չեն ուրախացնում:

Յեվ ինչպես չտիրի Եմման:

Նա մայր չունի: Տարիներ առաջ մահացած իր մորը հազիվ էր հիշում. ավելի շուտ նկարովն է ճանաչում միայն: Մորաքույրը, վորն իր վրա յեր վերցրել Եմմային խնամելու հոգսը, այժմ հեռավոր քաղաքումն է ապրում: Գյուղում ապրող զասընկերները սակավ են իր մոտ գալիս, հայրը տանը համարյա չի լինում: Ամբողջ օրն Եմման անցկացնում է պապիկի հետ, վորին շատ է սիրում, կամ տան գործերով է զբաղվում, իսկ աշխատանքից ազատ ժամանակ հայացքը հառած հեռուները, հորիզոնի վրա ճախրող թռչուններից բացի վոչինչ չի տեսնում:

Այսպես միապաղաղ ու տաղտկալի անցնում են օրերը և նա ավելի ու ավելի յե կարոտում հորը, ավելի ու ավելի յե սիրում նրան և ամեն օր անհամբեր սպասում նրա տուն գալուն:

Չե՞ վոր նա հոր աչքերում անսահման սեր է տեսնում. և նրա թևերի մեջ ջերմ զգվանք զգում:

Նա զգում է, նա գիտե, վոր փոխադարձ կարոտն սկսում է հենց այն րոպեյից, յերբ հայրն ստիպված է լինում գնալ, յերբ նրա հայացքն աղոտանում է հեռվում, դեմքը մշուշապատվում տարածության և իր աչքերի կոպերի վրա ծանրացած արցունքի կաթիլների մեջ...

Եմման նման դեպքերում հիշում է՝

— Յես փոքր չեմ. լացը փոքրերին է սազական:

Ու հեծկլտանքը խեղդում է կոկորդում:

Այսօր ել Եմման չատ սպասելով հորը, հույսը կտրած անկողին մտավ:

Չանցած քսան րոպե, անաղմուկ ներս մտան հայրը՝ մեքենավար Անդրեյը, նրա ոգնական Պետյան, հոր վաղեմի ընկեր՝ դեպոյի ուրախ բանվոր Առաքելը և յերկու ուրիշ յերիտասարդներ, վորոնց Եմման առաջին անգամն էր տեսնում:

— Հայրի՛կ, — բացականչեց Եմման ու կիսախավարի մեջ վազեց դեպի նա:

— Սը՛ս... Եմմա ջան, եղ ինչու դեռևս քնած չես, — շնջալով հարցրեց Անդրեյը և նրան առնելով իր հաղթ բազուկների մեջ ջերմ գրկեց ու համբուրեց:

— Քեզ էյի սպասում, հայրիկ, — և աշխատելով մեծահասակի նման խոսել, ավելացրեց, — դու կաթածես մոռացել ես տան ճամբան: Յես տխրում եմ առանց քեզ, ել մի՛ գնա:

Անդրեյը փաղաքջելով Եմմային, տեղեկացավ, թե արդյոք վոչ վոք չի՞ հարցրել իրեն: Հետո նա հետաքրքրվեց, թե ինչ է անում ամբողջ օրը, ուտելիք կա՞ տանը թե վոչ և պատվիրեց մյուս օրը գնալ գյուղ և ուտելիք գնել: Անդրեյը մի քանի հանաքներ անելուց հետո, խոստացավ ել յերկար չբացակայել ու հաճախակի գալ տուն:

մարդիկ ստեղծվել են աշխատանքի համար, — խորիմաստ ասում էր պապիկը և Եմմային մխիթարելու համար ավելացնում, — Ժամանակն է՛ն չի, այ, աշունն է հիմա, ձմեռը կգա նրա յետևից և հայրդ հաճախակի տուն կգա. քեզ ել լավ-լավ բաներ կբերի:

— Գարնանն ել այդպես էլիր ասում... «ամառը կգա, աշունն ել յետևից ու...»

Եմմայի շրթունքները կախ են ընկնում և աչքերը խոնավանում են: Վորպեսզի լաց չլինի, նա փախչում է դուրս, մի դործ ճարում, զբաղվում դրանով ու այդպիսով խեղդում իր կոկորդով վեր բարձրացող հեծկլտանքը:

Նա ինքն իրեն ասում է.

— Յես փոքր չեմ. լացը փոքրերին է սազական:

Ու ել լաց չի լինում:

Սակայն նա շատ, շատ անգամ է տխրում, պապիկի հեքյաթներն ու պատմությունները «Վախկոտ իշխանի ու հնարագետ վարպետի մասին», «Գայլերի ու քաջ վորսորդի» և ուրիշ շատ բաների մասին թեև հետաքրքրական են, սակայն այժմ նրան չեն ուրախացնում:

Յեվ ինչպես չտիրի Եմման:

Նա մայր չունի: Տարիներ առաջ մահացած իր մորը հագիվ էր հիշում. ավելի շուտ նկարոյն է ճանաչում միայն: Մորաքույրը, վորն իր վրա յեր վերցրել Եմմային խնամելու հոգսը, այժմ հեռավոր քաղաքումն է ապրում: Գյուղում ապրող դասընկերները սակավ են իր մոտ գալիս, հայրը տանը համարյա չի լինում: Ամբողջ որն Եմման անցկացնում է պապիկի հետ, վորին շատ է սիրում, կամ տան դործերով է զբաղվում, իսկ աշխատանքից ազատ ժամանակ հայացքը հռոած հեռուները, հորիզոնի վրա ճախրող թռչուններից բացի վոչինչ չի տեսնում:

Այսպես միապաղաղ ու տաղտկալի անցնում են որերը և նա ավելի ու ավելի յե կարոտում հորը, ավելի ու ավելի յե սիրում նրան և ամեն որ անհամբեր սպասում նրա տուն գալուն:

Չե՞ վոր նա հոր աչքերում անսահման սեր է տեսնում. և նրա թևերի մեջ ջերմ զգվանք զգում:

Նա զգում է, նա գիտե, վոր փոխադարձ կարոտն սկսում է հենց այն րոպեյից, յերբ հայրն ստիպված է լինում գնալ, յերբ նրա հայացքն աղոտանում է հեռվում, դեմքը մշուշապատվում տարածության և իր աչքերի կոպերի վրա ծանրացած արցունքի կաթիլների մեջ...

Եմման նման դեպքերում հիշում է՝

— Յես փոքր չեմ. լացը փոքրերին է սազական:

Ու հեծկլտանքը խեղդում է կոկորդում:

Այսոր ել Եմման շատ սպասելով հորը, հույսը կտրած անկողին մտավ:

Չանցած քսան րոպե, անաղմուկ ներս մտան հայրը՝ մեքենավար Անդրեյը, նրա ոգնական Պետյան, հոր վաղեմի ընկեր՝ դեպոյի ուրախ բանվոր Առաքելը և յերկու ուրիշ յերխտասարդներ, վորոնց Եմման առաջին անգամն էր տեսնում:

— Հայրի՛կ, — բացականչեց Եմման ու կիսախավարի մեջ վաղեց դեպի նա:

— Մը՛ս... Եմմա ջան, եղ ինչու դեռես քնած չես, — չչնջալով հարցրեց Անդրեյը և նրան առնելով իր հաղթ բազուկների մեջ ջերմ զրկեց ու համբուրեց:

— Քեզ էյի սպասում, հայրիկ, — և աշխատելով մեծահասակի նման խոսել, ավելացրեց, — դու կարծես մոռացել ես տան ճամբան: Յես տխրում եմ առանց քեզ, ել մի՛ զնա:

Անդրեյը փաղաքշելով Եմմային, տեղեկացավ, թե արդյոք վոչ վոք չի՞ հարցրել իրեն: Հետո նա հետաքրքրվեց, թե ինչ է անում ամբողջ որը, ուտելիք կա՞ տանը թե վոչ և պատվիրեց մյուս որը գնալ գյուղ և ուտելիք գնել: Անդրեյը մի քանի հանաքներ անելուց հետո, խոստացավ ել յերկար չբացակայել ու հաճախակի գալ տուն:

Հետո Անդրեյը լուրջ և կամացուկ պատվիրեց.

— Յեթե վաղը կամ մի ուրիշ որ ոտար մարդիկ գան և հարցնեն իմ մասին, տե՛ս, կասես, վոր հայրդ վաղուց և տուն չի յեկել: Իսկ հիմա ուշ և արդեն, պնա՛ և քնիր:

Եմման զգաց, վոր լուրջ բան կա:

— Լավ, — ասաց նա, վոչ վոքի վոչինչ չեմ ասի:

Կիսախավարում ժպիտը խաղաց Անդրեյի յերեմին: Նա գիտե, վոր Եմման հաստատակամ աղջիկ և և իր խոսքը ճշտութեամբ կկատարի:

Եմման պառկեց, գլուխը ծածկեց վերմակով, բայց հորը տեսնելու ուրախութեանից չքնեց: Նա հետաքրքրվեց նաև հոր ընկերներով և զարմացավ ու մտահոգվեց, թե ինչո՞ւ հայրը պատվիրեց ուրիշներից թաղցնել իր տուն գալու մասին և վոչ վոքի վոչինչ շատել:

Եմման գլուխը ծածկեց վերմակով այնպես, վոր կարողանար ազատ շունչ առնել և վոր գլխավորն և տեսնել, թե ինչ են անում հայրն ու իր ընկերները, լսել նրանց խոսակցութեանը:

Անդրեյն ու ընկերները նստեցին սեղանի շուրջը, փաթաթեցին «այծի տոտիկները», և սենյակը լցրին մախորկայի թանձր ծխով:

— Տղե՛րք, — լսեց Եմման հոր շունջը. նախ և առաջ պետք է զգուշ լինել: Հավանաբար մեզ հետևում են: Սրիկաները յեթե մեր հետքերը կորցրած չլինեն՝ հյուր կզան: Դուռը թակեն թե չե, կարող ենք խոհանոցի ճակատի պատի աջ կողմի ներքևի յերկու քարերը գեպի դուրս հրել, դուրս գալ ու թաղանվել անտառում: Տան յետևի պատը պատուհան չունի. նրանք նույնիսկ յեթե շատվոր լինեն, կարող են այդ կողմից չկասկածել և պահակ չդնել: Կհանդիպենք. Ի—ի մոտ: Այժմ անցնենք գործի: Ալե՛ք, խոսի՛ր:

Եմման զգուշ նայեց վերմակի տակից ու տեսավ, վոր խոսողը լայն ճակատով, խոհուն ու համարձակ հայացքով շինելավոր անձանոթն է:

Ալեքն սկսեց խոսել հատու և վճռական ձայնով:

— Ինչպես ասեցի, յես ճակատիցն եմ գայիս: Սպիտակ բանակն արագ առաջ և շարժվում: Մերոնք առյուծի պես են կռվում, սակայն յերեվում և, վոր փամփուշտ քիչ ունեն ու կիսամերկ են: Սպաներն ու գեներայները յերազում են յերկու շարաթից հետո տոնել իրենց հաղթանակը: Այդ դեռ կտեսնենք: Կարվածատերերը յետ են դառնում ու գյուղացիներից խլում հողերն ու ազարակները: Քաղաքներում հաց չկա: Ամեն տեղ ձերբակալութեաններ են ու զնդակահարութեան: Բանվորներն ու աշխատավոր գյուղացիները գայրույթով են լցված սպիտակների դեմ: Յես կարող եյի սպիտակ բանակից անցնել մերոնց կողմը: Սակայն այստեղ ել շատ գործ կա անելու: Պետք է քայքայել սպիտակների թիկունքը: Անհրաժեշտ է հավաքել մեր ուժերը և թույլ չտալ գորք փոխադրել հյուսիս: Պետք է ապստամբութեաններ կազմակերպել քաղաքում ու գյուղերում: Կարևոր է սպիտակների կողմից հայտնաբերված մեր տպարանի փոխարեն մի ապահով տեղում նորը կազմակերպել: Գրաչար տղերք կան: Թուղթ ու ներկ կարելի յե ձարել: Յես կզբաղվեմ այդ գործով: Նորից եմ կրկնում՝ տպարանի համար ապահով տեղ պետք է գտնել: Ի՞նչ դրութեան մեջ են թաղցրած զենքերը:

— Չենքերը լավ թագստոցներումն են, — խոսեց դեպոյի բանվոր Առաքելը: Թագստոցներից մեկը, Իվանենկոյի մոտինը, գտել են: Պատժիչ վաչտի սպաները տեղն ու տեղը սպանել են Իվանենկոյին, խրճիթն ել այրել: Դեպոյում աշխատում ենք զինվորական խիստ հսկողութեան տակ: «Եծն» իր դունջը կոխում և ամեն տեղ: Նրա պատճառով ընկերներից մի քանիսը բանտարկված են: Բարեբախտաբար, ապացույցներ չկան նրանց դեմ:

— Պետք է այդ սրիկայի, այդ մատնիչի դեմքը բաց անել բանվորների առաջ և պոչը կտրել այնպես, վոր այլևս չհամարձակվի դեպոյի դռներիցը ներս մտնել, — ատամների տակից ասեց յերկրորդ անձանոթն ու լռեց:

— Յես ապրում եմ կենտրոնից բավախանին հե-  
ռու, դեպի արևմուտք: Դրացիների տները կպած չեն  
մեր տանը: Նկուղը շատ ել նեղ չի, յերեք հոգի կա-  
րող են աշխատել այնտեղ: Կինս վստահելի յե և կող-  
նի: Մեծ յերեխաս յերեք տարեկան է: Ի՞նչ ես կար-

ծում Անդրեյ, հարմար չի՞ տպարանի համար:

Հարցնողը սևահեր Պետյան եր, Ալյոշկինը:

Առաջին անձանոթն իր աչքերը սևեռեց Անդրեյի վրա:

— Վատ տեղ չի: Սիման՝ Պետյայի կինը լիովին վստահելի ընկեր է: Նրա վրա կարելի յե հույս դնել, — պատասխանեց Անդրեյը:

— Լա՛վ. յերկու որից հետո իբրև հնավաճառ կգամ տունդ տեսնելու: Նախազգուշացրու Սիմային, ասեց լայն ճակատով անձանոթը և շարունակեց.

— Ընկերներ, մերոնցից շատ շատերը բանտումն են: Այս նշանակում է մեզանից ամեն մեկը կրկնակի աշխատանք պիտի տանի: Մեր հենարանը դեպոն է և քաղաքի գործարանները: Բանվորները կբարձրանան, գյուղը կգա մեր յետևից: Սառնարյուն պետք է գործե՛լ...

— Սը՛ս՛ս... ձիերի դոփյունն է լավում. մոտենում են, — կերկերուն ձայնով շշնջաց Պավել պապը:

— Տղե՛րք, վեր կացեք. հորս լսողությունը չի խաբի: Պետյա, Առաքել, ճանապարհը ձեզ ծանոթ է: Ծարժվեցեք ասածիս պես, յես ձեր յետևից կհասնեմ:

Թա՛կ, թա՛կ-թա՛կ... — բացե՛ք դուռը, քանի չենք ջարդել:

Ներսում վոչ մի ծպտուն: Դեպի խոհանոցն են շարժվում սովերները:

Եմմայի սիրտը խիում է արագ: Նա մթության մեջ ուզում է կանչել, ուզում է վազել դեպի հայրը: Արցունքը խեղդում է նրան, ուղեղումն ամեն ինչ խառնվել է իրար և շիտթ պատկերներ են մնացել միայն: Եմման չի կարող շարժվել. վախը պատել է նրան, շունչը կտրվել է ու բերանը չի բացվում:

Թա՛կ... թա՛կ-թա՛կ-թա՛կ. ջարդում են դուռը:

— Ո՞վ է, — իբր թե քնահար՝ ձայն է տալիս պա-  
պը:

Դուռը ջարդվեց: Գրպանի մի քանի լուսարձակ-  
ներ միանգամից լուսավորեցին սենյակը:

Դեպի խոհանոց տանող դռան մեջը կանգնել է Անդրեյը:

Պապը նստած է անկողնում: Վերմակն ընկել է հատակին:

Եմման թանձր ծխի միջից տեսավ մի քանի դեմ-  
քեր, առաջ շարժվող զինվորական համազգեստներ, պարզված ատրճանակներ ու սվիններ:

Քանի՛սն են:

— Ձեռները վե՛ր, — հրամայեց յենթասպան. նրա խուզարկու հայացքը թափառում էր սենյակում:

— Ո՞ւր են մյուսները, ել մարդ չկա՞: Խուզար-  
կե՛լ:

Մի քանի զինվորներ շարժվեցին դեպի ներս, յերկուսը մտան խոհանոց:

— Ձեռները վե՛ր, — կրկին հրամայեց յենթաս-  
պան:

Անդրեյը ձեռները դանդաղ վեր բարձրացնելով, շարժվեց դեպի սենյակի կենտրոնը և կանգ առավ սե-  
ղանի մոտ: Նրա դեմքին և՛ ցասում կա և՛ հեղձական  
ժպիտ:

Եմման լայն բացած աչքերով՝ նայեց հոր դեմ-  
քին: Նրա դեմքի վրա խաղացող ժպիտն այնպե՛ս հանգստացրեց Եմմային, վոր դողն անցավ:

— Ուրեմն սարսափելի բան չկա, — անցավ Եմմա-  
յի մտքովը:

— Ո՞ւր են ընկերներդ, — յենթասպան սպառնալից  
դիմեց Անդրեյին:

— Պարոն յենթասպա, — սառը և անխռով ձայ-  
նով պատասխանեց Անդրեյը. տանը յես եմ, հայրս է  
և աղջիկս, նրան մի արթնա...

Անդրեյի հայացքը հանդիպեց Եմմայի բաց աչքե-  
րին:

Եմման տեսավ թե ինչպես հոր դեմքի մկանները

խողացին, ինչպես նա սպրդնեց և հայացքը դարձրեց  
այլ կողմ:

— Ձերդ գերազանցութիւն, վոչ վոք չկա:

Յենթատաւան դարմացած ու կասկածամիտ, նայեց  
գեկուցող գինւորներին և կարգադրեց.

— Տանել յերկուսին:

— Պարոն յենթատաւան. հայրս, ինչպես տեսնում եք  
ծեր ե ու կույր: Թողեք նրան աղջկաս մոտ:

— Հը՛մ... ստենք քաֆթառը մեզ պետք չի:

Շարժվի՛ր առաջ: Մենք քեզ հետ այնտե՛ղ կխոսենք:

Եմման այլևս չկարողացավ մնալ անկողնում:  
Նրա հաղիվ զսպվող հեկեկանքը պոռթկաց, արցունքի  
չիթերը վողողեցին այտերն ու թափվեցին անզուսպ:

— Հայրիկ... յե՛ս...

Նրանք գրկեցին իրար: Հեկեկանքը խեղդում ե  
Եմմային ու նա հոր ջերմ կրծքին փարված, վոչինչ  
այլևս չի ուզում տեսնել:

Ձինվորներից մի քանիսը հուզված, յերեսները  
չուռ տվեցին գեպի պատը: Մի քանիսն ել կարոտա-  
գին հայացքով դիտում էին Եմմային: Նրանք հիշե-  
ցին հեռու գյուղերում թողած իրենց զավակներին:

Յենթատաւան շիտթվեց և իր շիտթմունքը թազց-  
նելու համար արագ կարգադրեց.

— Բավական ե. շարժվե՛լ:

— Բաջ կացե՛ք, խնամեցեք մեկ-մեկու: Մնաք բա-  
րով:

Անդրեյը կրկին ու կրկին համբուրեց Եմմային,  
որքեց նրա աչքերը, արագ շարժումով վերցրեց իր  
յերկաթուղային բաճկոնը և շարժվեց գեպի դուռը:

Մնա՛ք բարով:

Լուսարձակի շողերը վերջին անգամ սահեցին  
հեծկլտացող Եմմայի և քարացած պապի վրայով,  
նրանց թողին կիսախափարի մեջ ու հեռացան:

Եմմայի կյանքն ե՛լ ավելի տխուր ու թախծոտ  
դարձավ: Այժմ արդեն շատ անգամ նա այլևս չի կա-  
րողանում ինքն իրեն զսպել. արցունքները հաճախ  
լվանում են նրա այտերը և ցամաքում նրա շորերի  
վրա:

Եմման ու պապն ե՛լ ավելի յերկար են նստում  
մերկ աղացիաների տակը: Նրանց յերեսներն աղամա  
դառնում են դեպի քաղաքը, վորտեղ բանտում նստած ե  
Անդրեյը: Նրանք ինչի մասին ել խոսեն, վերջը խո-  
սակցութիւնը պիտի դարձնեն Անդրեյի շուրջը:

Պապն այլևս հեքյաթներ չի պատմում: Վոչ նա  
տրամադրութիւն ունի հեքյաթներ պատմելու և վոչ  
ել Եմման՝ լսելու: Եմմային այժմ հետաքրքրում են  
այնպիսի խնդիրներ, վորոնք նոր են նրա համար, վո-  
րոնցից շատ բան չի հասկանում, սակայն վորոնք նրա  
մտքի կենտրոնում են և կապված են հոր հետ:

Պապի հետ խոսելով հոր մասին, կրկին ու կրկին  
անդրադառնալով Անդրեյի ձերբակալութեան գիշերվա  
դեպքերին, նրանք խոսում են յերկրում կատարվող  
անց ու դարձի շուրջը: Պապը, վորն առաջ չեր սի-  
րում նման խնդիրների մասին խոսել, այժմ խոսակից  
ունենալով Եմմային՝ պատմում ե չրջապատում կա-  
տարվող դեպքերի, հեռվում տարվող մարտերի, բան-  
վորների ու գործարանատերերի, գյուղացիների ու  
կարվածատերերի մասին: Պավել պապը միշտ իր խոս-  
քը հավատով լի վերջացնում եր նրանով թե՛

— Վերջն ամեն ինչ լավ կլինի, աշխարհի տերն ել  
կլինեն նրա բարիքներն ստեղծողները՝ աշխատավոր-  
ները:

Եմմայի միտքը մեկ զբաղվում ե մոտ, անմիջա-  
պես իրենց վերաբերող խնդիրներով, մեկ ել ընդար-  
ձակվում ե, դաշտերի լայն հորիզոնիցն ել դենն անց-  
նում՝ փորձում թափանցել նոր յերևույթների խորքը,  
հասկանալ այն, ինչ նոր ե, հեռավոր, ինչ մինչ այդ  
չի զբաղեցրել իր միտքը:

Նա պապի պատմածներին, բացատրութիւններին

և իր իսկ դատողութեամբ հասկացալ, վոր ամբողջ  
յերկրում մարդիկ բաժանված են յերկու մասի, վոր-  
ոնք ատում են իրար, վորոնք կուլում են իրար դեմ  
և նրանցից մեկն ու մեկը պիտի հաղթի: Եմման հաս-  
կացալ, վոր իր հայրն ու նրա ընկերները կարմիրներն  
հետ են, վոր նրանք դուրս են յեկել թագավորի դեմ,  
քչել նրան և շարունակում են կուլել բուրժուաների,  
կալվածատերերի և նրանց զորքի դեմ: Եմման ըմբռ-  
նեց, վոր բանվորներն ինչ ազգից ել լինեն և իրենց  
հալալ քրտինքովն ապրող գյուղացիներն ուզում են  
ազատ լինել, իրենց գլխին տերեր չունենալ և ա'յն,  
ինչ իրենց աշխատանքովն և ստեղծվում, ժողովրդի  
ոգտին ծառայեցնել:

Եմմայի համար սլարդիկեց նաև այն, թե ինչո՛ւ  
հայրը քիչ և ատու գալիս և թե ինչո՛ւ է նա զբաղ-  
վում: Նա հաճախ հիշում է ձերբակալութեան գիշե-  
րը, հոր և իր ընկերների խոսակցությունը, հիշում է  
այն մարդկանց, վորոնք յեկան ու տարան հորը, թե  
ինչպես հայրն ազատեց ընկերներին: Եմմայի հիշո-  
ղութեան մեջ վերականգնվում է հոր հանգիստ ու  
համարձակ դեմքը, յերբ խոսում էր սպայի հետ և նրա  
դեմքի հուզված արտահայտությունը, յերբ նա վեր-  
ջին անգամ պինդ գրկելով, համբուրեց իրեն ու գնաց:

Եմման հպարտութեամբ լցվեց իր հոր համար:  
— Հայրս բուլչեիկ է և անվախ...

Նրա դալուկ դեմքն ավելի լրջացալ. կապուտակ  
աչքերն ե՛լ ավելի խոհուն դարձան ու մտազբաղ, շար-  
ժումներն ավելի զուսպ: Եմման պզտակ է, վոր ավելի  
յե մեծացել, վոր իր հետաքրքրություններն այժմ այլ  
են և նոր զգացումներ են իրեն համակել:

Մի որ իրիկնապահին, յերբ արեգակը մտնում էր  
բլրակներն յետևը և մայրամուտի ստվերներն ելին  
յերկարել, — Պալել պապի տանը մոտեցալ մի մարդ:

Նա հագած էր բանվորական շորեր և գալիս էր քա-  
ղաքի կողմից:

— Բարի աջոց՝ և, պապի՛:

— Որդ արևո՛ւ լինի: Ձենդ ծանոթ ե, բայց չեմ  
կարողանում մտաբերել: Ո՞ւ էս, — հարցրեց Պալել  
պապը:

— Հա՛, վաղուց ե ես կողմերը չեմ յեկել: Մոռա-  
նալու իրավունք ել ունես: Յես Առա... .

— Առաքե՛լ, — հրճվանքով բացականչեց պապը:

Գալլե բա՛րի լինի: Նստի՛ր:

Պապը քաշվեց նստարանի մի կողմը և տեղ տվեց  
Առաքելին:

— Հա՛, բարի յե, բայց լրիվ չի:

— Հը, վատ բան կա՞, ամբողջապես լարված և  
ուշադիր՝ պապն իր դեմքը դարձրեց դեպի Առաքելը:  
Անդրեյից ի՞նչ ե լավում:

— Տաք տեղ ե, նստել ե, ելի: Մենակ չե, իսկ  
ընկերով՝ մահն ել հարսանիք ե: Անդրե՛յը, ա՛յ,  
ինչ եմ ասե՛լ: Թե գործ անել գիտի և թե այդ սրիկա-  
ներին քթիցը բռնած կխաղացնի: Մերոնցից մեկին,  
Հրեշտակ Կիլիոյին բաց են թողել: Իե ասենք, նա աշ-  
խարհի չարն ու բարու հոտն ել չեք ոտել, յեկալ  
պատմեց: Նա Անդրեյի և ուրիշների հետ միևնույն  
կամերայումն և նստած յեղել: Ասում է «Անդրեյին  
տանում են, բերում, հարցաքննում են ու բան չեն կա-  
րողանում գտնել»: Են ել ասեմ, վոր հրաշք ե պատա-  
հել: Եդ տղայի՛ մեր Հրեշտակ Կիլիոյի աչքերը բան-  
տում բացվել են. բոլորովին փոխվել ե, առաջվանը  
չի: Վոնց յերևում է Անդրեյը չիկացած ունելիով  
խառնել և նրա ուղեղը:

Այս խոսակցութեան ժամանակ Եմման տնակից  
դուրս յեկալ և զարմանալով, վոր պապը մենակ չի,  
չտապեց մոտենալ:

— Քեռի Առաքե՛լ, — հեռվից ճանաչեց Եմման ու  
վազեց դեպի նա:

— Բարե՛, բարե՛, — Հորիցդ ել շատ բարե, Եմմա  
ջան: Ասում ե «ուրա՛խ կաց, իմ մասին մի մտահոգ-

վի»։ Նա տուն դալ չի կարող հիմա, բայց քեզ շա՛տ  
ե հիշում։ Յերբ գործիցը պրծնի՝ կգա։ Ես կոչիկն ել  
քեզ նվեր ե ուղարկել։

Առաքելը բաց արավ փոքրիկ կապոցը, դուրս բե-  
րեց մի դույզ կոչիկ, մի քիչ խմորեղեն ու կոնֆետ։

— Յես գիտեմ, թե նա վորտեղ ե։ Յես փոքր չե՛մ։  
Դու նրան չես տեսել. ու նա ինձ կոչիկ ուղարկել չեթ  
կարող,— վիրավորված ինքնասիրությամբ ասաց Նե-  
ման և թեև կոչիկները նրան դրավում էյին, սակայն  
ձեռք չտվեց։

— Հա՛, վոր ես քանի ժամանակ եղպես մեծացել  
եա, լա՛վ ե։ Բայց կոչիկն ու կոնֆետը քեզ համար են։  
Մեկ չի՞, Անդրեյն ե ուղարկել, թե նրա ընկերը բերել։  
Աշուն ե, կոչիկներդ մաշվել են. ե՛ս հագիր։

Առաքելը Նեմայի ձեռքիցը քաշեց, նստացրեց  
ծնկին ու պատառոտված կոչիկները հանելով՝ նորը  
հագրեց։

— Բարո՛վ մաշես։ Մի քիչ մեծ են, բայց վնաս  
չկա. դու խոմ ելի յես մեծանալու։

— Ծնորհակալություն, քեռի։ Հայրիկի մասին  
պատմիր։

Խոսակցությունն Անդրեյի մասին շարունակելու  
անհամբեր ցանկությամբ՝ պապը հարցրեց.

— Ապրուստը, առողջությո՞ւնն ինչպես ե. խոմ  
հիվանդ չի՞։

— Հերս ասում եր «աշխարհումը մարդու համար  
գլխավորն առողջությունն ե» կատակեց Առաքելը։  
Առողջ ե։ Առաքելն շտապ ձեռքը տարավ մաշված պի-  
ջակի ծոցի գրպանը, հանեց այնտեղից թղթադրամ-  
ների մի փոքրիկ կապոց և ձեռքը մեկնեց պապին.

— Պապի՛, գիտեմ, ունեցածդ փողն արդեն վեր-  
ջացած կլինի։ Ես դրամը տղերքն ուղարկեցին։ Մի  
առ ժամանակ հերիք կանի։ Հետո յես կամ մերոնցից  
մեկն ու մեկը ելի կգանք։ Անհող կացեք։

Առաքելը մտահոգված, կարծես ինքն իր հետ խո-  
սելով, կամացուկ ավելացրեց՝

— Յեթե մեկն ու մեկը կասկածի տակ չընկնելով  
կարողանար Անդրեյին հաց տանե՛լ...

Նա արագ շարժումով վեր կացավ, դրամը դրեց  
պապի ձեռքը և փափսաց նրա ականջին.

— Սպիտակների բանը վոնց յերևում ե բուրդ ե.  
ռազմաճակատից շատ վիրավորներ են բերում։ Մե-  
րոնք առաջանում են։ Պահնորդական բաժինն ավելի  
կատարի յե դառել։

Առաքելը դառնալով Նեմային, գորովանքով գըր-  
կեց նրան, շոյեց մազերը և հրաժեշտ տալով՝ շտապ  
հեռացավ։

— Քեռի Առաքե՛լ... շուտ-շուտ արի,— կանչեց  
Նեման նրա հետևից։

— Ծուտ կգա՛մ,— հեռվից ձայն տվեց Առաքելը։  
Նրա պատասխանի հնչյունները ցրվեցին գիշերվա  
խավարում։

1806  
39

Մյուս որն Նեման սովորականից կանուխ վեր  
կացավ։ Նա հավարեց անկողինն ու սենյակը, ջուր  
բերեց, կրակ արավ, կարտոֆիլ խաշեց ու պապի հետ  
նախաճաշելուց հետո, պարկն ուսին գցելով՝ գնաց մո-  
տակա գյուղը։

Նեման անգամը չեթ, վոր մենակ գնում  
եր ուտելիք գնելու։ Գյուղում մի լավ բարեկամ կար,  
գյուղի դարբին Կոռնեյը, վորը նրան միշտ ոգնում  
եր, ասում, թե ումից ինչ կարելի յե գնել և հետևում  
եր, վոր չխաբեն նրան, թանկ չվերցնեն։

Նեման քայլում եր ճանապարհի կողքով ու չեթ  
նկատում, թե ինչպես իր կոչիկները թրջվում են չո-  
րացած խոտերի վրա նստած ցողի կաթիլներով։

Նա տարված եր մտքերով, չըջապատը չեթ նկա-  
տում։ Նեման, ինչպես և իր տարեկիցներից ամեն մե-  
կը, գիտեր, վոր մեծահասակներն իրենց յերեխա հա-  
մարելով՝ սովորաբար չեն վստահում վոչ մի կարևոր  
խոսք կամ գործ։ Այդպես եր յերեկ նաև քեռի Առա-

քելը: Նա հանաքներ արեց, կատակեց իր և պապի  
հետ խակ կարևորն այնպես ասաց, վոր ինքը՝ Եմման  
չլի:

— Գուցե քեռի Առաքելը կարծում է, թե յես բան  
չեմ հասկանում և վոչ մի բանում ոգտակար լինել  
չեմ կարող:

Եմման այս մտքից վրդովվեց, բարկացավ: Նա  
փորձեց այլևս չմտածել դրա մասին, բայց անհաջող:  
Նա շարունակ վերադառնում էր իրեն վրդովող հար-  
ցին՝ հասակափորների վերաբերմունքին:

Ինչո՞ւ, ինչո՞ւ անարդարացի կերպով իրենց  
տհաս են համարում ու փոքր:

Գյուղը յերևաց բլրակի յետևից: Եմման մեքենա-  
յորեն արագացրեց քայլերը:

Նա մտավ գյուղը, անցավ փոքրիկ խրճիթների  
մոտով, մտավ գլխավոր փողոցը, վորի վրա մի քանի  
յերկհարկանի ու աղյուսաշեն տներ կային ու քայլերն  
ուղղեց դեպի Կոռնեյի տունը:

Եմման գիտեր, վոր այդ յերկհարկանի տները  
գյուղի հարուստներինն են:

Այս տներից մեկի մոտովն անցնելիս՝ նա տեսավ  
պատուհանների մոտ նստած և լավ հագնված մի քանի  
կանանց: Նրանցից մեկն Եմմային տեսնելով դարձավ  
իր ընկերուհիներին և ցույց տվեց դեպի փողոց:

— Տեսե՛ք, տեսե՛ք եզ բոլշևիկի ճուռին: Վո՞նց է  
պարզարվել, նոր կոշիկներ է հագել:

Եմման դդաց իր կարմրելը: Կարմրած լինելու  
գիտակցութունից շիկացան նրա յերկու այտերը: Նա  
արագացնելով քայլերը, շարունակեց ճամբան:

Ահա և Կոռնեյի տունն ու արհեստանոցը: Ինչո՞ւ  
արհեստանոցի դռները փակ են ու մուրճերի հարված-  
ների ձայնը չի լսվում:

Եմմայի քայլերն ահամա դանդաղեցին:

Նա կամացուկ մոտեցավ խրճիթի փակ դռանը և  
թակեց գուռը:

Դուռը փակ մնաց:

Եմման բռունցքով սկսեց հարվածել դռանը. «ինչ

եմ անելու, յեթե տանը մարդ չլինի» անցավ նրա  
մաքովը, և նա ավելի արագացրեց հարվածները:

Քիչ անց, դուռը բացեց տարիքով մի կին:

— Ո՞ւմն ես ուզում, աղջիկ, — հարցրեց նա:

— Քեռի Կոռնեյին:

— Նա տանը չի:

— Իսկ մորաքույրը, — մի պահ մտածելուց հետո  
հարցրեց Եմման:

— Նա տանն է: Ի՞նչ ես ուզում: Գո՞րծ ունես:

— Այո՛:

Դուան միջից յերևաց մի յերիտասարդ կնոջ  
գլուխ:

— Նե՛րս արի, Եմմա Չան, հրավիրեց նա:

Եմման ներս մտավ:

Նա դիտեց իր շուրջը, տեսավ, վոր միշտ կոկիկ ու  
մաքուր սենյակը խառն է, նայեց Կոռնեյի կնոջ լացից  
կարմրած աչքերին, հոգնած ու գունատ դեմքին և  
ինքն էլ զարմանալով թե ինչու՝ հիշեց հոր ձերբակա-  
լության գիշերը:

— Ո՞ւր է Կոռնեյ քեռին, հարցրեց Եմման:

Սակայն ինչո՞ւ հարցրեց: Չէ վոր նա արդեն գի-  
տե, թե ուր է Կոռնեյը:

Յերկու կանայքն էլ լուռ մնացին:

Այս լուռթյունից Եմման ավելի շփոթվեց, դդաց,  
վոր հարցն անտեղի յեր և իր հուզմունքը թագցնելու  
համար կախեց գլուխը:

— Կոռնեյին տարան գիշերը: Իրենց տներից տա-  
րել են նաև նրա ընկերներին, գյուղի բանվորներից ու  
գյուղացիներից մի քանիսին:

Իր պատասխանից Աննան՝ Կոռնեյի կինը, կրկին  
հուզվեց ու սրբեց արցունքոտ աչքերը:

Լուռթյունը խզեց անձանոթ կինը, վորը դիտում  
էր Եմմային, հարցրեց.

— Ո՞ւմ աղջիկն ես:

Եմմայի փոխարեն պատասխանեց Կոռնեյի կինը՝  
նա պատմեց Եմմայի, նրա ընտանիքի մասին և ավե-  
լացրեց.

— Խեղճ աղջիկն ու կույր պապը մենակ են մնացել: Եմման յեկել է ուտելիք տանելու: Պետք է հոգալ այդ մասին:

Աննան հիշելով վոր Եմման սոված կարող է լինել, արագ վեր կացավ, մոտեցավ պահարանին, հանեց կաթ, կարագ ու հաց և դրեց սեղանին:

— Այ թե ուշքս վրաս չե... Եմմա ջան, յերկար ճանապարհ ես կտրել, սոված կլինես: Մոտեցիր և կեր, մի՛ քաշվիր:

Եմման իսկապես սոված էր: Նա մոտեցավ սեղանին, կաթը խմեց, կերավ մի կտոր հաց ու կարագ և վեր կացավ:

— Ենորհակալություն: Յերեկ մեր տունը յեկավ ջեռի Առաքելը: Մեր ուտելիքներ վերջացել է: Նա փող բերեց ուտելիք գնելու համար: Ա՛յ փողի մի մասը: Եմման բաց արեց ձեռքում պինդ պահած թաշկինակը և փողը ցույց տվեց:

Անձանոթ կինը գորովանքով նայեց Եմմային, մի պահ մտածմունքի մեջ ընկավ և ժպիտը յերեսին մոտենալով նրան՝ ձեռքը դրեց նրա ուսին և ասաց.

— Քա՛ղ աղջիկ ես: Փողը պահիր: Ապա դառնալով Աննային՝ ավելացրեց.

— Այսոր ուտելիք տանելու բանը դժվար չե. սակայն պետք է մտածել սրանց ձմեռվա պաշարի մասին: Լավ է, վոր մի քիչ փող կա: Յես կխոսեմ հարե՛վաններիս հետ: Մի ճար պետք է անել. թե չէ ձմեռը կզա, ձյունը կնստի ու գործը կդժվարանա: Ժամանակն էլ խառն է. ո՞վ գիտե, ինչ կարող է պատահել:

Այս ասելով նա վեր կացավ ու դիմեց Եմմային:

— Գնանք աղջիկս: Եսոր ուժիդ չափով ուտելիք տար և վաղը տանը կաց: Քչից շատից ուտելիք ճարել ու ձեզ ուղարկել կարելի կլինի: Փողն էլ լավ պահիր, ապահով տուն տար: Չմեռվա պաշար բերողներին կտաս:

Անձանոթ կինը, վորն Եմմային շատ դուր յեկավ, Աննային ասաց, վոր շուտով կվերադառնամ և Եմմայի հետ դուրս յեկավ:

Քիչ անց Եմման ուտելիքով ծանրաբեռնված, դանդաղ քայլելով ուղևորվեց տուն:

Եմման նոր տնավորությունների տակ, պարկը շալակին քայլում էր դեպի տուն:

Արեգակի ջերմ շողերն իրենց աշնանային դուրեկան ջերմությամբ տաքացնում էյին նրան: Մեղմ գեփյուռը խաղում էր նրա խոպոպների հետ, շոյում նրա դեմքն ու կուրծքը, չորացնում ճակատին նստած քրտնքի կաթիլները:

Գյուղից բավական հեռացած լինելով և հոգնած, Եմման նստեց, սրբեց քրտինքը և հայացքը ուղղեց հեռուները:

Նա դարձյալ ընկավ մտածմունքների մեջ:

... Ֆեռի Կոռնեյին տարել են, — մտածում ու ինքն իր հետ խոսում էր Եմման, — նրա ընկերներին էլ: Հայրս ահա քսան օր է բանտարկված է: Ո՞վ գիտե ինչքա՞ն, ինչքան շատ մարդիկ են բանտարկված: Իսկ ովքե՞ր են դրանք: Հայրս՝ մեքենավար, նրա ընկերները՝ բանվորներ, Կոռնեյը՝ դարբին, նրա ընկերները՝ բանվորներ, գյուղացիք... Իհարկե Կոռնեյին էլ ուսադիրներով մարդիկ տարած ու բանտարկած կլինեն, անպիտաններ... Ֆեռի Առաքելն ասաց, վոր «մերոնք մոտենում են»: Դա լավ է, կզան ու բանտարկյալներին կազատեն: Իսկ յեթե մինչ այդ բանտարկյալները սովից մեռ... Եմման սարսուռաց այդ մտքից և վորքան աշխատում էր դրա մասին չմտածել, այդ միտքը վանել իրանից՝ չէր կարողանում: Հանկարծակի ծագած կասկածն ամբողջ մարմնովն էր տարածվել, սիրտը բաբախում էր արագ, ճակատը ծածկվել էր սառը քրտինքով...

Եմմայի հայացքն ընկավ պարկին ու այդպես էլ մնաց:

Նրա միտքը կենտրոնացավ:

— Չե՞ վոր յես փոքր չեմ: Ինչո՞ւ կարող եմ մե-

նակ գնալ գյուղ, ուտելիք տանել պապի և ինձ հոմար, իսկ հորս ուտելիք չեմ տանում: Հեռո՞ւ յե, ի՞նչ կա վոր: Յեթե առավոտը շուտ ճանապարհ ընկնեմ, յերեկոյան մայրամուտին կկարողանամ տուն վերադառնալ: Եմման հանկարծ հիշեց, վոր պապն այդ գեպում ուտելիք չի ունենա: Յեվ իսկույն վորոչեց, — գնալու նախորդ որը կպատրաստեմ: Չե՞ն ընդունի. բայց Առաքելի խոսվածքից յես հասկացա, վոր չեն մերժում:

Եմմայի միտքը պայծառացավ: Նա նույնիսկ զարմացավ, վոր մինչ այդ չեր մտածել հորն ուտելիք տանելու մասին:

— Յես անպայման, անպայման պիտի գնամ: Հենց վաղը, — վճռեց Եմման:

Բայց... չե՞ վոր յես խոսք ավեցի վաղը տանը մնալ, — հիշեց նա: Չե՞ վոր են լավ մորաքույրը խոստացավ վաղը ձմեռվա պաշար ուղարկել և ինձ պատվիրեց տանը մնալ: Այդ պաշարը պետք է և՛ հայրիկի, և՛ պապիկի և ինձ համար:

— Լավ, վաղն ուտելիք կպատրաստեմ իսկ հաջորդ որն անպայման կգնամ, — վերջնականապես վճռեց Եմման:

Հանգստացած և գոհ իր վճռից, Եմման վեր կացավ, պարկը դժվարությամբ վերցրեց շալակը և ճանապարհը շարունակեց:

Բավականին ճանապարհ անցնելուց հետո, Եմման հեռվում նկատեց մի քանի այծ ու մի տղայի, վորը գիրքը ձեռքին նստած կարդում էր:

Նա ճանաչեց իր դասընկեր Ֆիլիպպին:

— Ֆիլիպպ, այծերիդ քչիւր դե-սը՛, — կանչեց Եմման ու պարկն իջեցրեց գետին:

— Բարե՛ Եմմա, ես ո՞ւր ես, չես յերևում, — հարցրեց Ֆիլիպպն ու իր ժիր հայացքը սևեռեց Եմմայի վրա:

— Ուշ-ուշ եմ գյուղ գալիս: Այ, հիմա գյուղիցն եմ վերադառնում, բայց մերոնցից վոչ վոքի չեմ տեսել: Նրանք ել, դու ել ինձ մոռացել էք: Ինչո՞ւ այժմերիդ յերբեք չես քշում մեր տան կողմը: Գիտե՞ս, մեզ մոտ այնպես լավ խոտ կա:

— Մայրս չի թողնում: Ասում է գյուղից շատ մի հեռացի: Սմբողջ որն այծերի հետն եմ, նստում եմ կարդալու, բայց մեկ ել տեսար անպիտաններն իրար հետեից վազելով փախել են հեռու: Ստիպված եմ լինում ընթերցանությունս ընդհատել ու գնալ նրանց յետեից:

Եմմայի ուշադրությունը գրավեցին այծերը և մանավանդ նրանցից մեկը, վորը սև մազեր ուներ, իսկ ճակատին սպիտակ խալ: Նրա պոզերը դեռևս թագնված էյին մազերի մեջ, իսկ փոքրիկ միրուքը համարչա չեր յերևում:

Եմման վաղուց չեր խաղացել այծերի հետ:

— Ինչ լա՛վն են: Ա՛յ, են մեկն ինչքա՛ն լավիկն է, — բացականչեց Եմման ու վաղեց նրան բռնելու:

Մեե՛, մեկեկե՛, — մկկացին այծերն ու ցըրվեցին տարբեր կողմեր:

Եմման ուզում էր անպայման ճակատն սպիտակ խալ ունեցող այծիկին բռնել:

— Չե՛ս բռնի, չե՛, նա այնպիսի չարաճճին է, — ձայն տվեց Ֆիլիպպը:

Յեվ իսկապես, Եմման շատ չարչարվեց մինչև կարողացավ նրան բռնել: Բռնելուց հետո ել շատ ճիգ գործ դնելով հաղիվ կարողացավ նրան քաշ տալ ու բերել:

Այծիկը վոտները խրում էր գետին և համառելով, ուզում էր գլուխն ազատել Եմմայի ձեռքից ու փախչել:

Եմման մոռացած իր հոգսերն ու մտածմունքը, ամբողջապես տարվեց այծիկով ու սկսեց խաղալ նրա հետ, փաթաթվել վզին, գրկել, միրուքը շոյել:

— Ֆիլիպպ, ինչ լավ է, վոր դու այծեր ունես և ամբողջ որը նրանց հետ խաղ ես անում:

— Ի՞նչ մեծ բան է վոր: Հողիս. հանում են անպիտանները: Յեկ նատիր, խոսենք. չե՞ վոր վաղուց է չենք տեսել իրար, — կարծես վիրավորված ասաց Ֆիլիպպը:

— Հիմա, հիմա, քրքջում է Եմման, այծիկին պառկեցնում իր ծնկներին ու համբուրում նրա դնչիկը: Դե գնա, ընկերներիդ հետ խաղ արա, — վերջապես այծիկին բաց թողեց Եմման ու յեկավ նատեց Ֆիլիպպի կողքին:

— Ի՞նչ գիրք ես կարդում. ո՛հ ո՛հ. նկարագարդ գիրք՝ «Գրանտ նավապետի վորդիները»: Ինձ ել կտա՞ս կարդալու: Իսկ սա ի՞նչ տետրակ է գրքի մեջ:

Ֆիլիպպն շտապով ձեռքը մեկնեց, վերցրեց տետրակը ու թաղցրեց:

Եմման ապչեց Ֆիլիպպի այս վարմունքի վրա և զարմանքով լի հայացքը հառեց դեպի նա:

— Ի՞նչ պատահեց, Ֆիլիպպ: Ձի կարելի նայե՞լ: Չես ուզում — պետք չի: Յես կարող եմ գնալ: Եմման ձեռքը մեկնեց դեպի պարկը, ցույց տվեց՝ իբր թե վեր է կենում գնալու:

— Դե լավ, լավ, ուզում ես կկարդամ: Ինքս եմ գրել:

— Ի՞նչը, — հետաքրքրությամբ Ֆիլիպպին դարձավ Եմման:

— Ա՛յ, ե՛ս. լսիր.

Ուրիկները դաշտում կանաչ

Թռչկոտում են ու մկրկում.

Տուն են դառնում կուշտ ու ուրախ

Յերբ արևը մայր է մտնում:

— Ինչ մի մեծ բան է վոր, — դեռևս վիրավորված տոնով նկատեց Եմման:

Ֆիլիպպը շառագունեց, ուզեց տետրակը փակել, սակայն Եմման չթողեց.

— Շարունակի՛ր կարդալ:

Ֆիլիպպը թերթեց մի քանի էջ և ավելի վստահ ձայնով արտասանեց.

Ո՞վ մեղանից չի պառկել  
Հանդում կամ սարալանջին,  
Դիտել կապույտ յերկինքը  
Ու լողացող ամպերին:

Ֆիլիպպն իր իսկ գրածն արտասանելով, ավելի վորդևորված շարունակեց.

— Հե՛յ ջան ամպեր, յես ել ձեզ հետ  
Ուզում եմ վեր, յերկինք թռչել,  
Ձեզ հետ մեկտեղ ու ձեր թեւին  
Հազար յերկիր, աշխարհ տեսնել:  
...Սակայն ամպը չի ել լսում,  
Լող է սալիս հեռուներում, —  
Հազար ու մի նուրբ ձևերով  
Բարևում է, անցնում, գնում:

Ֆիլիպպը դատարանում առաջին արտասանողն էր և յերեկույթ կամ հանդես չեր լինում, վորտեղ նա չարտասաներ: Եմմային թվաց, վոր մանավանդ վերջին վոտանավորը լսել է: Կամ գուցե նմանողությո՞ւն է:

— Դո՞ւ յես գրել, — ուզեց հավաստիանալ Եմման: Յերևի ունուցիչն ուղղել է, կամ հորեղբայրդ...

— Իհարկե յես եմ գրել, — համարձակ պատասխանեց Ֆիլիպպը: Իսկ հորեղբայրս... Նա ինչպես սրանք նույնպես և մյուսները չի ել տեսել: Նա գյուղումը չի:

— Ո՞ւր է, — կասկածով հարցրեց Եմման:

— Նա գնացել է հեռու տեղ, — ասաց Ֆիլիպպը և գլուխը կախեց:

Եմման նրա պատասխանի մեջ ինչ վոր գաղտնիք զղաց և դննական հայացքով նայեց նրա աչքերին:

— Ճիշտը չես ասում: Բանտարկե՞լ են:

— Դու վորտեղի՞ց դիտես, — զարմացած հարցրեց Ֆիլիպպը: Մայրս ասել է, վոր վոչ վոքի չասեմ:

— Վաղո՞ւց են տարել, — շարունակեց հարցնել Եմման:

— Մի ամսից ավելի կլինի:

— Ուրեմն նրան ավելի շուտ են տարել. — կարծես ինքն իր հետ խոսեց Եմման:

— Ուժի՞ց ավելի շուտ, — այս անգամ հարցրեց և անհամբեր պատասխանի յեր սպասում Ֆիլիպպը:

— Հայրեկիցս, զեռի Կոռնելից...

Եմման ու Ֆիլիպպը անխոս նայեցին իրար:

— Գիտե՞ս, Ֆիլիպպ, — լուռթյունը խզեց Եմման — մերոնք գալիս են, նրանք սպիտակներին կքշեն և բանտարկյալներին կազատեն:

— Այդ ուժքե՞ր են «մերոնքը», — հարցրեց Ֆիլիպպը:

Եմման հպարտությամբ պատասխանեց.

— Մերոնք, ե՛լի, չես իմանո՞ւմ: Կարմիրները բուլչեիկները:

— Իսկ կոմունիստները:

— Կոմունիստները... Ձե, չգիտեմ...

— Իսկ մայրեկիս ասել են, վոր կոմունիստներն են գալիս և շուտով այստեղ կլինեն: Ականջովս լսեցի:

Յերկմտանք արտահայտող հայացքներով ընկերներն իրար նայեցին:

— Բուլչեիկները, — ասաց Եմման, — բուրժուայների դեմն են, կալվածատերերի դեմն են: Նրանք գալիս են, վոր այստեղ, մեզ մոտ ել բանվորների ու գյուղացիների իշխանություն ստեղծեն: Իմ հայրն ել, նրա ընկերներն ել, բոլոր բանվորները բուլչեիկների կողմնակից են: Յես ել բուլչեիկների կողմնակիցն եմ, հպարտությամբ ավելացրեց նա:

— Եդ խոմ կոմունիստներն են, — քմծիծաղ տվեց Ֆիլիպպը, — դու չգիտես:

— Ձե, յես գիտեմ:

— Վոչինչ ել չգիտես: Ճիշտը յես գիտեմ:

— Դե լավ, — գիջեց Եմման, — յերևի բուլչեիկներն ու կոմունիստները ընկերներ են ու կուլում են սպիտակների դեմ:

— Այդ ճիշտ կլինի, — համաձայնվեց Ֆիլիպպը: Յես ել կոմունիստ եմ:

— Ուրեմն մենք հիմա բուլչեիկ և կոմունիստ ընկերներ ենք, չե՞:

Եմման մի պահ մտածմունքի մեջ ընկնելուց հետո դարձավ Ֆիլիպպին ու շնջաց. սա մեր գաղտնիքն է կրնելու: Այս մասին ուրիշներին վոչինչ չենք ասի:

— Իհարկե, — հաստատեց Ֆիլիպպը, բայց մենք ինչո՞վ կարող ենք ոգնել մեր ընկերներին: Այ, թե զենք ունենայի... յես ել կկուլեյի սպիտակների դեմ: Այնպես ուզում եմ ատրճանակ ունենա՛լ, կուլել և... յերբեմն վորսի գնալ:

— Վորսորդության գնալը դատարկ բան է: Բուլչեիկները վորսի չեն գնում:

— Յես կոմունիստ եմ, կոմունիստները... այո՛, այո՛, կոմունիստները վորսի գնում են. հորեղբայրս ել եր գնում:

— Դե լավ, գնում ես գնա, իսկ թե իմանաս յես ինչ եմ անելո՞ւմ:

— Ի՞նչ, — հետաքրքրվեց Ֆիլիպպը:

Եմման պատմեց իր ծրագիրը քաղաք գնալու և բանտարկված հորն ուտելիք տանելու մասին. ավելացրեց նաև, վոր ուտելիք շատ է տանելու, վորպեսզի հայրն իր ընկերներին ել բաժին հանի:

Ֆիլիպպն ընկավ մտածմունքի մեջ:

— Յես ել եմ ուզում գալ: Բայց ի՞նչ անեմ այժե՛րի հետ: Մայրս յեթե իմանա՛ չի թողնի: Կասի փոքր ես:

— Հեչ ել փոքր չես: Տասներկու տարեկանն արդեն փոքր չե, իսկ դու իմ տարիքին ես:

Եմմային դուր յեկավ յերկու հոգով քաղաք գնալու միտքը: Իրար կողմեն և ուրախ կլինի:

— Ֆիլիպպ. իսկապես ուզում ես դա՞լ:

— Իսկապեսը վո՛րն է. իհարկե ուզում եմ, — սրտնեղած պատասխանեց Ֆիլիպպը:

— Յեթե այդպես եղու վաղն այժե՛րին քչիր դեպի մեր տունը: Նրանք թող արածեն, իսկ մենք յերկուսով շատ խոտ կքաղենք մյուս սրվա համար, այժե՛րին կիսակենք մեր փայտանոցում, ջուր ու խոտ կտանք ու կղնանք: Իրիկունը դու այժե՛րին տուն կտանես և վոչ վոք չի իմանա, թե դու վորտեղ եյիր:

— Այ թե իսկապէս լավ բան մտածեցիր. համաձայն եմ, այդպէս ել կանենք, — պատասխանեց Ֆիլիպպը:

— Տե՛ս, խոսքիդ տերը լինես և առավոտը շուա գաս, յեթե ուշացար, մենակ կգնամ:

— Վոր ասեցի՝ կանեմ:

Այսպիսի հաստատ վորոշում կայացնելուց հետո, Եմման Ֆիլիպպի ոգնութեամբ շալակեց պարկն ու ճամբա ընկաւ: Ֆիլիպպը վազեց իր այծերին հովաքելու, վորոնք պատանի այծարածի զբաղված լինելու և իրենց վրա ուշադրութիւն չդարձնելու պատճառով հեռացել էին ու ցրվել դաշտում:

Ինչպէս վորոշեցին, այնպէս ել արեցին:

Միակ խոչընդոտը մնում էր պապը. նա կարող էր չթուլատրել: Եմման ու Ֆիլիպպը վորոշեցին առայժմ թագցնել պապից իրենց վորոշումը. նրանք պապին ասացին, թե գնում են հարեան գյուղը, վորտեղ ապրող դասընկերուհին իրենց կանչել է իր մոտ. կվերադառնան յերեկոյան, յերբ արեգակը մայր մտնի:

Պավել պապը մտածելով, վոր Եմմայի համար դժվար է ու տխուր ամեն որ տանը մնալ՝ համաձայնվեց:

Յերրորդ որը, առավոտ կանուխ Եմման ու Ֆիլիպպը ճանապարհ ընկան:

Նրանք լիքը զամբյուղն անցկացրին մի ձողի վրա, բռնեցին նրա յերկու ծայրերից և մեծ գործի գիտակցութեամբ լցված, ուրախ ու բարձր տրամադրութեամբ, քայլեցին գեպի քաղաք:

Չնայած Պավել պապի անակն ու Ֆիլիպպի ապրած գյուղը քաղաքից այնքան ել հեռու չէին, նրանցից ամեն մեկը քաղաք գնացել էր վոչ ավել քան մի յերկու անգամ և այն ել վաղուց: Նրանք շատ աղոտ էին հիշում քաղաքը, և այժմ կրկին անգամ քաղաքում լինելը, և այն ել առանց մեծերի ուղեկցութեան,

նրանց ել ավելի յեր վողեւորում, կարճացնում ճանապարհը:

— Եմմա, յես անպայման ուղում եմ քաղաքում ման գալ. մի տեսնենք թե ենտեղ ինչ կա:

— Իհարկէ, միայն յեթե ժամանակ լինի: Յես ել եմ ուղում քաղաքը տեսնել, — պատասխանեց Եմման:

Նրանք մոտենում էին քաղաքին:

Արդեն պարզ յերևում էին գործարանների ծխնելույզները, վորոնք քաղաքի ծայրամասերի զանազան տեղերից իրենց հաղթ հասակով գեպի յերկինքն էին ձգտում: Նրանց մի մասը չէր աշխատում. միայն մի քանիսի յերախներինցն էր, վոր սև ծխի քուլաներն իրար հրելով բարձրանում էին վերև, ծածկում յերկընքի կապույտը: Ավելի ու ավելի հստակ սկսեց յերևալ քաղաքի կենտրոնում շինված գինվորական յեկեղեցու խաչն ու գմբեթը, վորոնք անշարժութեամբ մեջ քարացած՝ ծանրացել են քաղաքի շենքերի վրա:

Եմման ու Ֆիլիպպն անցան գերաններից կազմված կամրջով ու մտան գետի ձախ սփին փոխած քաղաքի առաջին փողոցները, վորոնց յերկու կողմերում կանգնած մի հարկանի տները վոչնչով չէին տարբերվում գյուղական խճիթներից:

Առաջին հերթին պետք էր հարցնել և իմանալ բանտ տանող ճանապարհը:

Նրանք մոտեցան տներից մեկի շէմքին գլխահակ նստած մի ծերունու:

— Պապի, վո՞րն է բանտի ճանապարհը:

Ծերունկը բարձրացրեց գլուխը, կարճատես աչքերն ուղղեց հարցնողներին և չչտապելով պատասխան տալ, սկսեց գննել նրանց:

Ֆիլիպպը հարցը կրկնեց:

— Այտեղ հիմի յերկու բանտ կա: Վո՞րն էք ուղում, հինը՝ գլխավորը, թե՞ նորը:

Եմման ու Ֆիլիպպը տարակուսանքով նայեցին մեկ մեկու:

— Նորը:

— Հինը:

— Բալիկներ, վոնց յերևում է գյուղիցն եք գա-  
լիս ու քաղաքին ել ծանոթ չեք: Յերևի չեք ել իմա-  
նում, թե վոր բանտումն է այն մարդը, վորի համար  
յեկել էք: Յե՞վ կարծես ինքն իր հետ խոսելով ավե-  
լացրեց, — այո, հարցնողները միայն դուք չեք, շատ  
են հարցնողները:

Ճանապարհի մասին ծերուկի բացատրություննե-  
րը լսելով և աշխատելով մտքումը պահել նրա տված  
փողոցների անունները, Եմման ու Ֆիլիպպը ճանա-  
պարհը շարունակեցին:

Նրանք վորոշեցին առաջ գնալ նոր բանտը, մանա-  
վանդ վոր նա ավելի մոտ եր և յեթե այնտեղ չգտնե-  
լին Անդրեյին, գնալ հին բանտը — գլխավորը:

Անցնելով մի քանի փողոցներից և ճանապարհը  
չչփոթելու համար մի յերկու մարդու ևս հարցնելով,  
նրանք վերջապես կանգ առան մի յերկհարկանի գորշ  
չենքի առաջ, վորի ճակատի ցուցանակի վրա գրված  
եր «Տուփերի արհեստանոց»:

Յուցանակը կարդալով, նրանք տարակուսանքի մեջ  
ընկան: Սակայն փակ դարպասի մոտ ուսադիրներով  
և հրացանը ձեռքում պահած զինվորական պահակին և  
նրանից քիչ հեռու զամբյուղներով ու փաթեթներով  
կանանց տեսնելով, նրանք համոզվեցին, վոր դա  
բանտն է:

Ֆիլիպպը համարձակ մոտեցավ պահակին և  
հարցրեց.

— Մեքենավար Անդրեյն այստե՞ղ է բանտարկ-  
ված:

Յերթեկեղոզ պահակն առանց կանգ առնելու  
կարեկցական մի հայացք դրեց յերկուսի վրա և կի-  
սաժպիտն յերեսին, անխոս ցույց տվեց կանանց  
խումբը:

Եմման ու Ֆիլիպպը զարմացած պահակի լուռ-  
թյան վրա, թողին նրան ու մոտեցան կանանց խմբին:

Կանայք իսկույն չըջապատեցին նրանց, հարց ու  
փորձ արեցին, քաջալերեցին և բացատրեցին, թե ինչ  
պիտի անեն և ում դիմեն:

Նրանք մտան բանտապետի գրասենյակը, յերկչոտ  
մոտեցան սեղանի մոտ նստած յենթասպային և  
կրկնեցին իրենց հարցը:

Յենթասպան ալարկոտ թերթեց մի հաստ մատ-  
յան և չարությամբ պատասխանեց.

— Հը՛մ, աղավնյակն ամսույս յերեքին տեղա-  
փոխված է գլխավոր բանտը: Գնացեք այնտեղ: Սպան  
տեսնելով, վոր յերեսաները չեն շարժվում՝ դռուց.

— Ի՞նչ եք ապուշի պես կանգնել: Աղատեցեք  
գրասենյակը:

Ֆիլիպպն ու Եմման սթափվելով ու ատելությամբ  
լցված դեպի յենթասպան՝ դուրս յեկան գրասենյա-  
կից:

Գլխավոր բանտը գնալու համար նրանք պետք է  
յերկար ճանապարհ կտրեյին, անցնելին քաղաքի  
կենտրոնական փողոցներով և գնային քաղաքի մյուս  
կողմի արվարձանը:

Առաջին անհաջողության, յենթասպայի ասածի  
ու կոպիտ վերարբերմունքի ազդեցության տակ նրանք  
լուռ ու մտածկոտ, սակայն ուշադիր զիտելով իրենց  
չուրջը, շարունակեցին ճանապարհը:

Եմման ու Ֆիլիպպն անցան հարյուրավոր խա-  
նութների մոտից, տեսան նրանց ցուցափեղկերում  
դրած պես-պես խորտիկներն ու այլ ուտելիքները.  
նրանք ակամա հիշեցին իրենց զամբյուղը, վորտեղ  
միայն հաց կար, մի կտոր պանիր, խաչած կարտոֆիլ  
ու արևածաղիկ սերմ, վորն Եմման սիրով բովել էր  
հոր համար:

Քաղաքի կենտրոնի շրջուցիչ հարստությունն ու  
փարթամությունը համեմատելով նույն այդ քաղաքի  
առաջին իսկ արվարձանի հետ, հիշելով իրենց հա-  
մեստ ու որեցոր ավելի չքավոր դարձող կյանքը,  
նրանք իրենց լիակատար ոտար զգացին...

Սակայն նրանց վրա ամենախոր տպավորութիւններ  
թողեց և միաժամանակ դող ու սարսափ առաջացրեց  
մի այլ բան:

Քաղաքի ամենաբանուկ յերկու փողոցների հան-  
գույցում, մայթի յերկարութեամբ յերկշարք տնկված  
դեկորատիվ ծառերից մի քանիսի վրա նրանք անսպա-  
սելիորեն տեսան կախված կիսամերկ գիւղիներ, վո-  
րոնց մերկ վտանները հազիվ կես մետր բարձր լինելին  
գետնից և վորոնց կապտած ու այլանդակված դեմքե-  
րը մինչև հոգու խորքը սարսուցքին յերկու ընկեր-  
ներին: Նրանք բնագոյարար ընդհուպ մոտեցան իրար,  
փորձեցին այլևս չտեսնել մեկ մեկու հաջորդող խեղ-  
դամահ գիւղիները, չնայել կախվածների կրծքին կրպ-  
ցրած թերթիկներին, վորոնց վրա նրանք կարդում  
էին «բուլչեիկ», «սա յե ամեն մի բուլչեիկի վերջը»  
մակագրութիւնները...

Քաղաքացիներից շատերն ել անխոս, սեղմված  
ատամներով ու արագ անցնում էին այս անսպասելի  
և անորինակ տեսարանի մոտից, վորն անջնջելի հետ-  
քեր եր թողնում ամեն մեկի հիշողութեան մեջ և հա-  
կառակ այդ պատկերն ստեղծողների ցանկութեան՝  
զգվանք, խոր ատելութիւնն ու աճող զայրույթ եր  
ծնեցնում հենց իրենց՝ սպիտակների հանդեպ:

Յերբ Ֆիլիպպն ու Յաման անցան գիւղիների շար-  
քի մոտից, շունչ առան և դեռ ևս կարկամած,  
սպրդնած դեմքերը դարձրին իրար. նրանց հայացք-  
ներում վախ կար և նրանք միաժամանակ միևնույն  
զգացումներն ու ապրումներն էին արտահայտում...

Նոր և խոր տպավորութիւնների տակ, համարյա  
վազելով, նրանք վերջապես հասան հին բանտը:

Հին բանտը կից շենք չունեցող, ընդարձակ հրա-  
պարակում միայնակ բարձրացող մեծ ու կանոնավոր  
մի խորանարդ շենք եր: Նրա զարդարանքներից զուրկ  
աղյուսի պատերի վրա կային իրար վրա բարձրացող

չորս շարք յերկաթացանց փոքրիկ պատուհաններ:  
Այս շենքը հատկապես բանտի համար եր շինվել: Մի  
քանի տասնյակ տարիների ընթացքում այնտեղ նրա-  
տած հազարավոր մարդիկ ազատութեան մասին են  
յերազել, սակայն ստիպված են յեղել բավականանալ  
պատուհանից յերեւացող կապուտակ յերկնքի մի փոք-  
րիկ կտորն ու թռչունների ազատ թռիչքի մի ակուն-  
թարթը դիտելով:

Յաման ու Ֆիլիպպը մտան բանտի գրասենյակի  
սպասարանը: Յաման իր ներքին հուզմունքն աշխա-  
տելով թազցնել, ծեծեց փակ փեղկը և դիտելով բաց-  
ված անցքից իրեն նայող զույգ աչքերն ու յերկար բե-  
խերը՝ հարցրեց.

— Իմ հայրը, մեքենավար Անդրեյ Սիլինը այս-  
տեղ ե. կարելի՞ յե նրան տեսնել և ուտելիք տալ:

— Վոչ, — յեզով պատասխանը, ուտելիք ընդու-  
նելու ժամն անցել ե արդեն, իսկ տեսնելու թույլտը-  
վութիւն... հրմ... տեսնելու թույլտըվութիւն տա-  
լիս ե միայն բանտապետը. նա այստեղ չե: Կգաս մի  
չաբաթից:

Փեղկը փակվեց:

Ներկաների կարեկցական հայացքները ծանրացան  
Յամայի վրա: Յաման այդ հայացքների ազդեցութեան  
տակ և հուզվեց և ջղայնացավ: Չնայած, վոր վորոշ-  
վեց զալ մի շաբաթից և այդ վորոշումը նրան հան-  
գըստացրեց, սակայն չկարողացավ իրեն զսպել և  
զամբոյղի մոտ նստած հեկեկաց: Ֆիլիպպը հազիվ  
կարողանալով թազցնել իր հուզմունքը՝ շրթունք-  
ներն եր կծոտում:

Լացը բաց արավ փեղկը: Բեխավոր մարդը գլու-  
խը դուրս հանեց:

— Ի՞նչ կա լաց լինելու, ասեցին կգաս մի շաբա-  
թից:

Ֆիլիպպը մոտեցավ բաց փեղկին:

— Մենք գյուղից ենք գալիս և ամբի շուտ չե-  
լինք կարող հասնել, ճանապարհն ել չզխառնել:

Մյուս անգամն էլ կարող ենք ուշանալ, իսկ այստեղ գիշերելու տեղ չունենք...

— Առաջի՞ն անգամն է,— հարցրեց բեխալոր մարդը:

— Այո:

Բեխերը չքացան, սակայն փեղին այս անգամ դանդաղ փակվեց:

Քիչ հետո կողքի դռնից դուրս յեկավ մի զինվոր և հայացքը պտտեցնելով ներկաների վրա մոտեցավ Շմմային, վորի լացն արգեն դադարել էր:

— Ի՞նչ ես բերել,— հարցրեց նա և ձեռքը յերկարեց զեպի զամբյուղը: Ո՞ւմ համար է:

Շմման տվեց հոր անունն ու աղբանունը:

— Լավ. սպասիր այստեղ:

Ներկաներից մի յերիտասարդ կին մոտեցավ յերկու ընկերներին.

— Յեթե նա,— խոսողն ակնարկում էր բանտարկյալին,— այստեղ է, ապա մոտ մի ժամից պատասխան կատանաք: Չարմանալի յե, վոր ես քարացած սրտերի տեր մարդիկ զեթ մի անգամ խղճահարվեցին:

Սպասարանը կամաց-կամաց դատարկվեց: Մնացին Փիլիպպն ու Շմման:

— Ես լավ յեղավ, չե՞,— Շմմային զիմեց Փիլիպպը,— թե չե հայրդ ուտելիք չեր ստանա և մենք ել իզուր յեկած կլինեյինք:

Շմման մտքերի մեջ խորասուզված՝ չպատասխանեց: Նա նրտատրոփ սպասում էր զամբյուղը տանող զինվորի վերադարձին: Մի գուցե հայրն այստեղ ել չի, ապա ել ո՞ւր կարող է լինել: Չե՞ վոր քեռի Առաքելն ասաց, վոր բանտումն է, նոր բանտումը չեր, ուրեմն այստեղ պիտի լինի: Տեսնես հիմա հայրս ինչ է անում... Ի՞նչպես պիտի ուրախանա, յերբ ստանա զամբյուղը: Կիմանա՞ արդյոք վոր յես եմ բերել. իսկ վո՞րտեղից կարող է իմանալ: Չամբյուղից: Մի գուցե զինվորն ասի, ինչ լավ կլինի վոր իմանա... Յես որանից հետո միշտ պիտի դամ և ուտելիք բերեմ:

Պապիկին կպատմեմ այսորվա մասին: Նա չի բարկանա, վոր իրենից այս անգամ թագրի քաղաք գնալս: Նա կների և իհարկե ինձ հետ կհամաձայնվի հայրիկին ուտելիք բերելու հարցում: Իսկ յեթե թույլ տան տեսնե՛լ հայրիկին...

Հարկադրված լինելով սպասել, նրանք սկսեցին գննել իրենց շուրջը: Սենյակը մերկ էր, կար միայն մի յերկու նստարան և պատուհանի վրա ջարդված թիթեղյա մի ջրաման: Պատերի ծեփը տեղ-տեղ թափված էր և գաջած սպտը կիսասևացած: Արեգակի մի փունջ ճառագայթները խաղ էյին անում սարդի վոստայնով ծածկված պատուհանի վրա և աստիճանաբար հորիզոնական դիրք ընդունում:

Որն իրիկնանում էր:

Վերջապես բացվեց գրասենյակի ներսի դուռը և զամբյուղը ձեռքին ներս մտավ նույն զինվորը:

Չամբյուղը տեսնելով, Շմմայի սիրտն սկսեց արագ բարախել. ուրեմն հայրն այստեղ չե...

— Վերցրու զամբյուղը. ասաց զինվորն Շմմային մոտենալով: Սա ել հորդ նամակը. տանը կկարդաս, իսկ հիմա շուտ հեռացեք այստեղից, թե չե կտեսնեն. ձեզ ել լավ չի լինի, ինձ ել:

Բերկրանքի արցունքը յերկու վճիռ կաթիլներով կախվեց Շմմայի աչքերից:

— Գնանք, Շմմա,— ուրախ ձայն տվեց Փիլիպպը և զամբյուղը վերցրեց:

Նրանք դուրս յեկան սենյակից, արագ անցան բանտի հրապարակից և թեքվելով առաջին իսկ անկյունը՝ կանգ առան:

— Փիլիպպ, կարդանք նամակը:

— Կարդանք:

Նամակը տրորված թղթի մի փոքրիկ կտոր էր:

Շմման ճանաչեց հոր ձեռագիրը և հափշտակությամբ սկսեց կարդալ.

«Շմմա ջան,

իմ թանկագին բալիկ.

Վորքան ուրախ եմ այս րոպեյիս...

Ա՛յնքան, այնքա՛ն շատ կարոտել եմ քեզ: Շատ անգամ լսում եմ քո ձայնը, խոսում քեզ հետ...

Այս վոչինչ:

Իմ եմմա, վաղ թե ուշ դարձյալ միասին կլինենք: Քաջ կաց:

Բերածիդ համար շնորհակալ եմ:

Ել մի՛ բերի, ճանապարհը յերկար ե, յեղանակը ցուրտ. կարող ե մրսես:

Բարեկիր պատիկին:

Քեզ լավ պահիր, չհիվանդանաս:

Հազար, հազար անգամ համբուրում եմ աչիկներդ:

Ցտեսութ՛յո՛ւն:

### Անդրեյ»

Եմման չկարողացավ գսպել իր արցունքները, վորոնք թափվում էին հորդառատ:

Եմմայի արցունքոտ աչքերը չէին նկատում շըր-ջապատը: Նրա ուղեղում մեկ առ մեկ վերակենդանացան չքացած որերի մարած պատկերները: Ահա իր հայրը թիկնեղ ու խոհուն դեմքով... ահա ինքը՝ եմման բարձրանում է նրա ծնկներին, վոր իր և հոր դեմքերը միևնույն մակարդակի վրա լինեն և հայացքներն այդպես իրար հանդիպեն, ահա հոր կոշտացած ձեռքերը, վորոնք այնքա՛ն քնքշորեն շոյում են իր մազերն ու այտերը: Ո՛, եմման լավ գիտի թե հայրն ինչպես ջերմ սիրում է իրեն. նա վաղուց գիտե այդ: Այդ սերը նա զգացել է և՛ հոր ներկայութ՛յան և նրա բացակայութ՛յան ժամանակ: Ինչպիսի խանդաղատանքով հայրը հանդիպում էր իրեն ամեն անգամ, յերբ մի քանի օրվա բացակայութ՛յունից հետո վերադառնում էր տուն...

Այժմ հայրը բանտարկված է: Նա բանտարկված է բուրժուաներին առելու, իր ընկերների, իր նման բանվորների հետ միացած նրանց դեմ կովելու համար:

— Վոչ,— լացից հանգստացած և ինքն իրեն ախարակեակով շարունակում էր մտածել եմման. յես

ամեն ինչ կանեմ հորս և նրա բնկեոներին ողնելու համար: Յես 13 տարեկան եմ (եմման մի տարով իր տարիքը մեծացրեց) և պարտալ չպիտի նստեմ տանը:

Փիլիպպը, ինքն էլ չիմանալով թե ինչու, հանգիտ թողեց եմմային: Նա կրկին անգամ կարդաց եմմայի հոր՝ Անդրեյի նամակը և տեսնելով բազմահարկ աների յերկարացող սովերներն ու լուսամուտների գորշացող ապակիները, անհանդստացավ և ջանալով ավելի կշիռ տալ իր խոսքին՝ վճռականորեն գլմեց եմմային:

— Բավական ե, լացդ հայրիկի՛դ էլ, քե՛զ էլ, ինձ էլ պետք չի, դնա՛նք, ուշ ե արդեն:

Եմմայի համար սովորական բան էր դառել չաբաթը մի անգամ քաղաք դնալ, սպասել բանտի գրասենյակի սպասարանում և դատարկ դամբյուղն ստանալով յետգալ տուն: Նրա մտածմունքների և առօրյա աշխատանքների առանցքը հոր համար ուտելիք պատրաստելն ու տանելն էր: Տան մյուս աշխատանքները և պատիկի ու իր մասին հոգալը յերկրորդական խնդիր էր դարձել: Սաղն ու գրոսանքը մոռացվել էին բոլորովին: Նույնիսկ յերեկոները յերբ պատը սովորաբար դանազան պատմութ՛յուններ էր պատմում, փոխվել էին: Յերեկոյան ժամերն աննկատելի անցնում էին մեկի հոր և մյուսի վորդու՝ Անդրեյի մասին և եմմայի քաղաք դնալ-դալուց ստացված թարմ տապալորութ՛յունների շուրջը խոսելով:

Եմման զգում էր, վոր ինքն ավելի տոկուն ու համառ է դառնում: Աշնանային անձրև է թե մառախուղ, ձյուն է թե վաղորդյան սառնամանիք, միևնույնն է, եմման անցնում է քաղաքի ճանապարհով: Քաղաքի շուկան շտապող հատ ու կենտ գյուղացիք արդեն ճանաչում էին եմմային և յերբեմն նրան ընկերակցող Փիլիպպին: Նրանք գիտեյին թե ինչի համար է եմման գնում քաղաք և ում համար է դամբյու-

զը: Ծատ անգամ նրանք հակառակ Եմմայի բողոքներին, վերցնում էյին նրա դամբուղը և հանձնում էյին միայն այն ժամանակ, յերբ քաղաք էյին հասնում:

Եմմային մտահոգություն եր պատճառում մի այլ բան: Հոր ընկերներինց վոչվոք չեր յեկել իրենց տունը: Առաքելը յերկրորդ անգամ գալուց հետո ել չեր յերեւացել: Ի՞նչ է պատահել. ինչո՞ւ չեն գալիս: Ծատ ախոսս վոր ինքը չի իմանում նրանցից և վոչ մեկի հասցեն: Եմման այս հանգամանքը կապում եր այն բանի հետ, վոր չնայած իր խնդիրներին, լացին ու աղաչանքին, վոչ մի կերպ թույլ չավին հոր հետ տեսակցություն ունենալ: Հոր յերկատոյններն ել շատ չոր էյին ու կարճ: Քաղաքը կարծես ավելի բազմամարդ եր դարձել և ավելի աղմկոտ: Սակայն, Եմման դա պարզ տեսնում եր, — չկային առաջին օրերի անհոգ դեմքերը, քրքիջներն ու յերաժշտությունը:

Կենտրոնական փողոցների շքեղ հազված մարդկանց դեմքին մտահոգությունն եր նստել: Նրանք այլևս չէյին զբոսնում. ընդհակառակը, շտապով անցնում էյին փողոցով և արագ մտնում էյին այս կամ այն տունը կամ զինվորական հաստատություն, վորոնց դռների առաջ միշտ աշխուժություն կար:

Քաղաքի արվարձաններում Եմման անդորրություն եր տեսնում: Սակայն յեթե նա լսեր փողոցով անցնող բանվորներին, հացի կամ ջրի հերթ կանգնած կանանց, յերեկոյան ժամերին լիներ բանվորական ընտանիքներում, ապա կտեսներ, վոր այդ անդորրությունը միայն արտաքուստ ե: Նա կիմանար, վոր այդ արվարձանների բնակիչների հուզվերն ու մտքերը, ցանկություններն ու հույսերը մարդկանց հոգու ալեկոծ ծով են կազմում, ծով, վորը պատրաստ ե դուրս գալու իր ափերից յերբ փոթորիկը վրա հասնի և տապալի կաշկանդող չըջապատի ժայռերը...

Եմման ինքն ել սպասումներ ուներ իր սրտում: Նա թեև չեր խոստովանում, սակայն զգում եր և հասկանում, վոր յերբեք իր հայրը՝ Անդրեյը բանալից դուրս չի գա, յեթե մի արտակարգ բան չպատահի:

Յեվ նա սպասում եր այդ արտակարգ դեպքերին: Սակայն թե ինչ ե լինելու դա, ինչպես և յերբ՝ նա չգիտեր: Թե ինչ ե անելու նա ինքը՝ նույնպես պարզ չեր:

Եմման մտքերի ծանրության տակ, հետզհետե թեթևացող դամբուղը ձեռքում, Եմման կտրում եր իր սովորական ճամբան՝ տանից դեպի բանտ և բանտից դեպի տուն:

Յեվ ահա ձմրան մի օր, սառնամանիքներին, յերբ ձյունն ավելի յե խոչնում վոտների տակ և բերանի դուրջին սառցե գնդիկներ ե կազմում մարդկանց բխերի և վերարկուի բարձրացրած ոճիքի վրա, Եմման զղաց իր յետևից յեկող մի մարդու ծանր ձեռքն իր ուսին:

Նա շուռ յեկավ և նկատելով յենթասպայի շորերով մի անծանոթի, ուղեց ուն ազատել և արագ հեռանալ: Սակայն անծանոթի ձեռքը մնաց ուսին:

— Բարե՛, Եմմա, ինչ լավ յեղավ վոր հանդիպեցիր: Ի՞նչ ե, չճանաչեցի՞ր:

Եմման ճանաչեց Պյոտր Ալյոշկինին՝ Պետյային և մի ակնթարթ ուրախացավ. սակայն դա միայն մի ակնթարթ եր. յենթասպայի շորերն ու ուսադիրները կասկածանք առաջացրին նրա մեջ:

— Հիշում եմ, իհարկե... սակայն դու... դուք...

— Լավ, լավ, մի վախենա: Յես ելի են եմ, ինչ էյի. շորերս թող չվախեցնեն քեզ, — ասաց Պետյան և ձայնն իջեցնելով ավելացրեց, — յես սպիտակներից չեմ: Գնանք ինձ մոտ: 20-30 քայլ հեռավորությամբ հետևիր ինձ:

Եմման դարձյալ յերկմտանքի մեջ ընկավ: Հետևել նրան, թե՞ վոչ: Պյոտր Ալյոշկինն առաջվա փականազործ Պետյան ե, հոր ընկերը, թե՞ սպիտակ սպա:

— Ուշ ե արդեն. մինչև մայրամուտը հաղիվ տուն հասնեմ: Պապս ել մենակ ե, պիտի գնամ, — առարկեց Եմման:

— Այդ ճիշտ ե. Պավել պապը կանհանգստանա:

Այդ դեպքում հիմա շտապիր տուն: Պալելի պապին աաս, վոր Պետյան ինձ կանչել է և վաղը ցերեկվա ժամի 12-ից հետո արի մեր տունը՝ 40 գիծ, № 34. հեշտ կգտնես: Կհարցնես Սիմային՝ իմ կնոջը, Առաքելն ել կգա: Գործ կա: Լա՞վ:

— Լավ:

Պետյայի խոսակցութեան անկեղծութունը և Առաքելի անունը վստահութուն ներշնչեցին Սիմային և նա հանդիստ սրտով շտապեց տուն:



Հաջորդ որն Սիման հեշտութեամբ դատով Պյոտր Ալյոշկինի տունը: Նա թաղեց դուռը մի անգամ, յերկրորդ անգամ, սպասեց մի քիչ, սակայն դուռը չբացվեց: Կասկածները կրկին կրծեցին նրա սիրտը: Վերջապես լուսամուտի սառցե ծաղիկներ հազած ապահու հետևից յերեւաց մի կնոջ դեմք: Քիչ հետո նույն կինը դուռը բացեց:

— Շատ սպասեցիր: Քնած եյի և չլսեցի: Ներս արի, — ժպտադեմ հրավիրեց դուռը բացող յերիտառարդ կինը, վորի դեմքը սակայն քնից նոր վեր կացածի վոչ մի արտահայտութիւն չունէր:

Սիման ներս մտավ, միջանցքում թափ տվեց վրայի ձյունը, մաքրեց կոշիկները և մտավ սենյակ. սենյակի դուրեկան տաքութիւնն ավելի կարմրացրեց նրա ցրտից շիկնած այտերը:

Քիչ հետո, զվարթ դեմքով ներս մտավ Առաքելը, մոտեցավ Սիմային, գրկեց ու տարավ նստեցրեց աթոռին.

— Նստիր, թաղուհի, այս է քեզ արժանավայել տեղը: Յե՛վ դառնալով Սիմային—ասաց. այժմ թող բացվի կախարդական սեղանը և Սիմա թաղուհին բազմատեսակ ուտելիքների միջկց թող ընտրի միակ ընտրելին՝ մի բաժակ թեյն ու մի կտոր հացը:

— Յե՛վ մի քիչ ել կարագ, — ավելացրեց Սիման:

— Ո, հո՛, հո՛. ուրեմն Սիման այժմ ամենայեր-

ջանիկ արարածն է, իսկ յես, նրա խոնարհ ծառան մոռացել եմ կարագի համը:

Սիման Առաքելի կատակներից աշխուժացավ: Նա մոռացավ իր ամաչկոտութիւնը և իրեն զգաց հարազատներով շրջապատված:

Սիման ու Առաքելը հարց ու փորձ արին Սիմային՝ Անդրեյին ուտելիք տանելու մասին, դովեցին նրա տոկունութիւնն ու արիութիւնը, հարցրին Պալելի պապի ու Սիմայի ապրուստի մասին:

Սիման պատմեց և իր հերթին հարցրեց, թե ինչպես է վոր Պետյան սպա յե դառել:

Առաքելը կուշտ ծիծաղեց.

— Նա այնքան է սպա, ինչքան դու իսկական թաղուհի:

Սիման բան չհասկացավ և տարակուսանքով լի հայացքը հանեց Սիմայի և Առաքելի վրա:

Դուռը թակեցին:

Առաքելը մոտեցավ պատուհանին և զգուշութեամբ դուրս նայեց:

— Պետյան է, — ասաց նա:

Սիման գնաց դուռը բաց անելու. նա վերադարձավ Պետյայի հետ:

Պետյայի դեմքը լուրջ էր ու մտախոհ: Նա վառարանի մոտ քիչ տաքանալուց հետո դիմեց Սիմային.

— Սիմա, դու զիտե՞ս հորդ ինչու յեն բանտարկել:

— Գիտեմ. նա բողբոջիկ է. դու ել, Առաքելն ել, Կոռնէյն ել բողբոջիկներ եք. սպիտակները բողբոջիկներին հալածում են, բանտարկում, սպանում: Հայրս այն որը բռնվեց, յերբ ուշացավ փախչել ձեզ հետ:

— ձիշտ է. նա ուշացավ վորպեսզի բողբոջիս հնարավորութիւնն ու ժամանակ տա փախչելու, նա հեղափոխական է և հեղափոխականի պես վարվեց: Հայրդ քաջ ու համարձակ է, իսկ դու խոմ վախկոտ չե՞ս:

Սիման մեծ բավականութիւն զգաց այն բանից, վոր իր հետ այդպես լուրջ են խոսում: Իսկ ինչո՞ւ, ինքը վախկոտ պիտի լինի: Նա մութից չի վախենում,

պապի հետ մենակ ապրում ե ամայի դաշտում, մե-  
նակ գնում ե գյուղ ու վերագառնում, ամեն անգամ  
դալիս ե ու հորն ուսելիք բերում, ցրտից, սառնա-  
մանիքից ու սպիտակներից ել չի վախենում: Չե՞  
վոր ինքը փոքր չե. 13 տարեկան ե արդեն:

— Իսկ դու, Եմմա, — դարձյալ նրան դիմեց Պետ-  
յան, — նո՞ւյնպես բուլչելի ես:

— Ի հարկե բուլչելի եմ. ատում եմ սպիտակնե-  
րին: Յես մի ընկեր ել ունեմ, վորը սպիտակներին չի  
սիրում, բայց նա կոմունիստ ե:

Եմման գարմացավ թե ինչու յերեքն ել ծիծաղե-  
ցին: Իր ասածի մեջ ի՞նչ կա ծիծաղելու: Մի՞թե բու-  
լչելիկը կոմունիստ ընկեր ունենալ չի կարող:

Պետյան բացատրեց, վոր բուլչելիներն ու կոմու-  
նիստները միևնույն մարդիկն են, վորոնք չեն վախե-  
ցել բանտից, արսորից ու մահից և իրենց ամբողջ  
ուժն ու կյանքը նվիրել են հեղափոխության հաղթա-  
նակին:

Պետյան ասեց նաև, վոր իրենց մոտ, վորտեղ  
բուրժուաներն ու նրանց գեներալներն են իշխում,  
ժողովուրդը դեռ շատ բան չգիտե բուլչելիների-կո-  
մունիստների մասին և իրենք ամեն կերպ, գաղտնի ու  
հայտնի միջոցներով աշխատում են նրանց բացատրել,  
թե ովքեր են և ինչ են ուզում բուլչելիները և վորն ե  
իրենց՝ աշխատավորների անելիքը:

— Դու ել կարող ես մեզ ոգնել այդ գործում: Չե՞  
վոր դու բանվորի, հեղափոխականի աղջիկ ես, հա-  
մարձակ ես ու քաջ:

Այո, Եմման վաղուց ե մտածում այդ մասին: Նա  
շատ բան ե ուզում և կարող ե անել. սակայն ի՞նչ և  
ինչպես՝ չգիտե: Փիլիպպն ել ե ուզում ոգնել կոմու-  
նիստներին, բայց նա ել չի իմանում ինչ անի: Եմ-  
ման բորբոքվեց իր հոր, նրա ընկերների, հեղափոխա-  
կանների գործին ոգնելու ցանկությամբ...

Եմման այս բոլորի մասին մտածեց, բայց չկարո-  
ղացավ արտահայտել իր մտքերն ու հույզերը. նա  
միայն ասաց.

— Այո՛, ինչ կարող եմ՝ կանեմ:

— Յեվ յերբ քեզ բռնեն սպիտակները, մի յերկու  
աստակ տան, մուժ անկյունում փակեն, դու, իհար-  
կե, կվախենաս, լաց կլինես և կտաս հորդ ու մեր  
ամենքի անունն ու հասցեն, չե՞, — այս անգամ ար-  
գեն առանց կատակելու խոսեց Առաքելը:

— Յեթե չեք վստահում, պետք չե, — վիրավոր-  
վեց Եմման, — յես նման բան չեմ անի ինչպես ել վար-  
վեն հետս... մարդ այնպես պետք ե գործ անի, վոր  
չբռնվի:

— Այ դա ճիշտ ե. պետք ե գգուչ լինել: Դու գի-  
տես, վոր մերոնցից շատերը ձերբակալված են: Ըն-  
կերներից շատերն ել թագնվում են այստեղ ու այն-  
տեղ, — Պետյան նայեց Առաքելին, — մի քանիսն ել  
ծպտված են գործում, ամեն բոպե կարող են բռնվել —  
զգուշ պետք ե լինել:

— Իսկ ի՞նչ եմ անելու, — անհամբերությամբ  
հարց ավեց Եմման:

— Ա՛յ թե ինչ. յես քեզ առայժմ կտամ 20 թուռ-  
ցիկ: Դու պիտի կարողանաս աննկատելի կերպով այդ  
թուռցիկները փակցնել գյուղի տների պատերին: Կա-  
րո՞ղ ես այդ անել:

— Դրանից ել հեշտ բա՞ն: Յես շատ անգամ գյու-  
ղից տուն եմ վերագարձել մուժն ընկնելուց հետո:  
Գյուղացիները շուտ են քնում, փողոցները դատարկ-  
վում են. շներն ել ինձ ճանաչում են ու չեն հաջում:

— Այդ լավ ե. թուռցիկները փակցրու այնպիսի  
չենքերի, ասենք դպրոցի, փոստի բաժանմունքի  
պատերին, վորտեղ մարդ չի ապրում. սրանով աշխա-  
տանքն ավելի անվտանգ կլինի: Կկարողանա՞ս:

— Այո:

— Յե՞րբ:

— Վաղը յերեկոյան:

— Շատ լավ:

Միման բերեց թուռցիկները և թագքրեց Եմմայի  
չորերի տակ: Պայմանավորվեցին, վոր Եմման 2 ուր  
հետո դա և պատուհանի փեղկերը լաց ու վարագույրը

կախված տեսնելու դեպքում դուռը ծեծի. հակառակ դեպքում նա առանց կասկած հարուցելու իր վրա, կվերադառնա տուն ու մեկ էլ կգա այն ուրը, յերբ ուտելիք բերի հոր համար:

Մի քանի ուրիշ ցուցումներ ևս ստանալուց հետո Եմման դուրս յեկավ Ալյոշկինի տնից:

— Վերջապես յես էլ կարող եմ լուրջ աշխատանք կատարել — ինքնարաջականությամբ մտածեց Եմման ու արագացրեց քայլերը:

Յերբ նա տուն հասավ աստղերն արդեն վառվել էյին մուգ կապույտ յերկնակամարի վրա:

Եմման վարժվեց թուուցիկներ փակցնելու գործին: Նա այնպես վարպետ ու զգուշ կերպով եր անում այդ վտանգավոր աշխատանքը, վոր Ալյոշկինն ու մյուս ընկերները զարմանքով ու հիացմունքով էյին խառում նրա մասին:

Քաղաքում ևս թուուցիկներ տարածելու գործում Եմման փոքր դեր չխաղաց: Նա մոտենում եր պատերին փակցրած հրամաններին, թատերական հայտարարություններին, ձեյացնում եր թե ուշադրությամբ կարդում է և յերբ տեսնում եր, վոր մոտովն անցնող մարդ չկա կամ մայթով անցնողները շատ հեռու յեն, ընդհուպ մոտենում եր պատին, գրպանից արագ հանում եր սոսնձի շիշը, պատը մի քանի տեղով սոսընձում ու փակցնում եր թուուցիկը: Յեթե անսպասելի կերպով անցորդ եր մոտենում, նա առանց ինքն իրեն կորցնելու կոնակը շուռ եր տալիս դեպի պատը, գլխով ծածկում եր թուուցիկը և իբրև անհող ու թափառաշրջիկ աղջիկ, սկսում եր արեածաղիկ ուտել ու զթի տակ մի վորևէ յերգ մոմոալ:

Մի տեղում թուուցիկը հաջողությամբ փակցնելուց հետո Եմման արագությամբ կտրում եր այդ փողոցը, մտնում նրան հատող մի այլ փողոց և այնտեղ

էլ յերբ հարմար մոմենտ եր ստեղծվում, վարպետությամբ կատարում եր նույն գործողությունը:

Եմման ուրախանում եր անսահման, յերբ անցնելով նույն փողոցի հակառակ մայթով տեսնում եր, վոր մարդիկ գլուխները հակած կարդում են և արագ անցնում:

Պատահում եր նաև յերբ նա հեռվից ակնատես եր լինում թե ինչպես վոստիկանը ամենամեծ հայհոյանքներ թափելով բոլշևիկների գլխին, պոկում եր թուուցիկը և զանակով քերում թուուցիկի այն. կտորները, վորոնք սոսնձած տեղում ամուր կպած էյին լինում պատին: Հավաքվում էյին մարդիկ և յեթե նրանք թուուցիկը կարդացած չէյին լինում, ապա խոսակցություններից իմանում էյին թե նա ում կողմից է և ինչ է ասված նրանում:

Եմման չեր բավարարվում միայն թուուցիկներ տարածելով: Նա ամեն անգամ թուուցիկների նոր կապոց ստանալով, գտնում եր մի ապահով անկյուն, նրստում եր ու կարդում: Ճիշտ է, Եմման թուուցիկներից շատ բան չեր հասկանում, շատ բառեր անձանոթ լինելով, խանգարում էյին հասկանալ նախադասության իմաստը, սակայն թուուցիկի ընդհանուր միտքն ու վոզին ըմբռնում եր և ամբողջապես համակվում նրանով:

Վերջին շրջանի թուուցիկներից մեկը, վորն Եմման ավելի լավ ըմբռնեց և վորը նրան վոզևորեց բանավորների հաղթանակի և ապագայի մեծ հեռանկարներով, հետևյալն եր

«Ընկեր բանվորնե'ր և գյուղացինե'ր

Վերջանում է խավար գիշերը: Մեր յերկրամասի հյուսիսում արդեն կարմիր արշալույսն է բացվել: Բուրժուազիան զգալով կոմունիզմի մեծ արեգակի բարձրանալը, գործ է դնում ամեն տեսակի ստորություններ իր իշխանության վերջին ժամերը յերկա-

ըացնելու համար: Բանվորներին ու գյուղացիներին նա բռնի ուժով քշում է հակահեղափոխական ավազակախմբերն ու ստիպում է կովի գնալ հզոր պրոլետարական բանակի դեմ, վորն ուժեղ է և հոգով արի, վորովհետև պայքարում է ճշմարտության և ազատության համար:

Կամավորներ\*), մի հավատաք ձեր պետերին: Նրանք խաբում են ձեզ. համոզված լինելով, վոր յերեք միլիոնանոց պրոլետարական բանակի դեմ անզոր են, ձեզ ուղարկում են կովի՝ ցանկանալով ձեր մահը: Դեն նետեցեք հրացանները, մի կովեք հեղափոխության բանակի դեմ:

Բանվորներ և գյուղացիներ: Արշալույսը մոտ է: Ամբապնդեցեք ձեր շարքերը: Հրացանները թող հաստատ մնան ձեր կուռ ձեռներում: Հորիզոնի վրա բարձրանում է արեգակը, վորը ջերմություն կրերի ձեր բազմատանջ մարմիններին:

Ընկերներ. ցրեք ռեակցիայի սև ամպերը, վորոնք ձեզ խեղդամահ անելու պատրաստ կախվել են ձեր գլուխների վրա: Վոչ մի զինվոր մի սովեք հակահեղափոխական կամավորական բանակին, վորովհետև այդ բանակը ձեր թշնամի բռնակն է:

Մի հավատաք ռեակցիոներներին\*\*) փքուն խոստումներին: Բացի գերեզմանի յերեք արշին հողից դուք նրանցից վոչ մի կտոր հող չեք ստանա: Հողը դո՛ւք պիտի վերցնեք: Նրանք ձեզ չեն փրկի. ձեր ազատությունը դո՛ւք պիտի ձեռք բերեք:

Պրոլետարական գիկատաուրայի միջոցով մենք կհասնենք կոմունիզմին:

Մոտ է հաղթանակը. շուտով կգա այն ժամը,

\*) Սպիտակների բանակներից մեկը, վորը կազմված էր Ռուսաստանի հարավում, կոչվում էր կամավորական բանակիսկ զինվորները «կամավորներ»:

\*\*) Հին կարգերը վերականգնելու կոդիակիցներ—հետագիմականներ:

յերը կոմունիստական կարգերի ճաճանչը կտարածվի վոչ միայն մեր յերկրում, այլ և ամբողջ աշխարհում: Կեցցե՛. համաշխարհային Սորհրդային Հանրապետությունը:

Կեցցե՛ն համաշխարհային պրոլետարական հեղափոխության առաջին հերոսները՝ Ռուսաստանի բանվորներն ու գյուղացիները:

Կեցցե՛ Ռուսաստանի սոցիալիստական Ֆեդերատիվ Սորհրդային Հանրապետությունը»:

Եմման տարված ընդհատակյա հեղափոխական գործի հմայքով, ցանկանալով Ֆիլիպպին ցույց տալ իր խիզախությունը և հավատալով նրա ազնվությանն ու գաղտնապահությանը, պատմեց վերջին յերկու շաբաթվա ընթացքում թուրքիկներ տարածելու իր աշխատանքի մասին: Նա միայն լռեց այն մասին, թե ովքեր են իրեն այդ գործը վստահել:

— Իսկ յես հիմարի պես տանը վեր ընկած վտանավորներ եմ գրում, վորոնք վոչ ինձ և վոչ ել մի ուրիշի պեսք չեն,— դժգոհ սոսաց Ֆիլիպպը:

— Բանաստեղծություններ գրելը վատ բան չէ, Ֆիլիպպ, իսկ յեթե ուզում ես, դու ել կարող ես մասնակցել մեր գործին,— հեղինակավոր տոնով սոսաց Եմման: Ամեն մարդ ով համարձակ է, գաղտնապահ է ու նվիրված բանվորների պայքարին, նա կարող է այդ անել:

— Լավ վոր քեզ ճանաչում են, դիտեն, իսկ ինձ վոչ վոք չի ճանաչում և նման բան չի հանձնարարի:

— Մի՛ տխրի: Յես վաղը կտեսնեմ նրան և կստեմ, վոր քեզ ել հանձնարարեն նման աշխատանք: Յես քեզ համար կերաշխավորեմ: Միասին աշխատենք. լա՛վ:

Ֆիլիպպի ինքնասիրությունը մի բույե վերավորվեց, վոր իր տարիքի մի պատանի, իր դասընկեր Եմման է իր համար յերաշխավորություն տալու: Սակայն չէ՞ վոր նա ինչքա՛ն ժամանակ է զբաղվում է

այդ գործով և աշխատում է վարպետորեն: Վերջապես  
ի՞նչ կա վոր. նա ընկեր է, իսկ ինքը բացի իր ձերբա-  
կալված քեռուց և Եմմայից վոչ մի կոմունիստի չի  
ճանաչում:

— Համաձայն եմ. յես ցույց կտամ, վոր կարող  
եմ ողնել կոմունիստներին: Վաղը ճաշից հետո յես  
քեզ կսպասեմ ճանապարհին:

Նրանք բաժանվեցին: Նրանցից ամեն մեկը մտա-  
ծում էր միևնույն բանի մասին: Մեկը՝ Եմման թե  
ինչպես Ֆիլիպպին ներդրավեց հեղափոխական գոր-  
ծում իսկ մյուսը՝ Ֆիլիպպը այն մասին, վոր վերջա-  
պես հնարավորութիւնն է ունենում ցույց տալ, վոր  
ինքն էլ իսկական կոմունիստ է, չի նստում տանը ու  
սպասում նրանց գալուն, այլ սպիտակների թիկուն-  
քում կաշխատի նույն գործի հաջողութեան համար:

Անցան ձմեռվա սառնամանիքները: Արեգակն ա-  
մենուրեք դուրեկան ջերմութիւնն էր տարածում: Կե-  
սորվա ժամին ջրի բարակ առվակները հոսում էին  
դանդաղ, կարծես մնաս բարև ասում ձյունի հյուսվող  
չերտերին ու գնում միանալու իրենց քույրերին՝ գար-  
նանային կարկաչուն ու սառնորակ գետակներին:

Սակայն մարդիկ կարծես չէին տեսնում հեռացող  
ձմրան յերթը, չէին զգում բնութեան վերածնունդը:  
Նրանք զբաղված իրենց կյանքում կատարվող խոշոր  
յերեմիայութեանով, ինչպես նաև առորյա հոգսերի ու  
մտածմունքների ծանրութեան տակ, չէին միանում  
գարնանամուտը վողջունող թռչունների յերգին:

Քաղաքում և գյուղերում հակասական լուրեր  
էին պտտում ռազմաճակատի դրութեան մասին:  
Սպիտակների հաղթանակները նկարագրող բուրժուա-  
կան թերթերին միայն միամիտներն էին հավատում:

Քաղաքն որ-որի վրա լցվում էր վերավոր գինվո-  
րականներով: Վերավորներով լեփ-լեցուն գնացքները

հյուսիսից հարավ էին շտապում և վերագառնում կի-  
սադատարի: Ուժեղացված էր քաղաքի պահակազուն-  
քը: Հյուսիսից շարվե-շարան գալիս էին անային  
թանկարժեք իրերով բարձրացած գյուղական կառ-  
քեր, վորոնց վրա նստած էին լավ հագնված  
կանայք, ջահել աղջիկներ, մանկահասակ տղա-  
ներ և տղամարդիկ: Սրանք կալվածատերերն էին  
և գյուղական խոշոր հարուստները, վորոնք յեր-  
կաթուղային գծից հեռու վայրերում ապրելով կամ  
հույս չունենալով տեղ ստանալ գինվորական  
գնացքներում, ավելի լավ էին համարում ճանապարհ  
քնինել իրենց սեփական կառքերով: Ո՞ր: Դարձյալ  
դեպի հարավ, վորտեղ կարծես թե Խորհրդային  
իշխանութիւնն ու բուլչեիկներ չկան:

Փսփսուկով խոսվում էր ռազմաճակատը յերկու  
հարյուր կիլոմետր հեռավորութեան վրա գտնվելու  
մասին. ասում էին, վոր կարմիր հեծելազորը իրար  
հետևից գյուղեր ու քաղաքներ է գրավում, սպիտակ-  
ները խուճապի մատնված պախչում են և այլն և այլն:  
Ո՞վ գիտե... Բոլորը խոսում են յերբորդ դեմքով՝  
«ասում են՝ այսպես է», «ասում են՝ այնպես է»...

Սակայն փսփսուկներն ուժեղանում էին, սպի-  
տակների սլարտութեան մասին խոսում էին արդեն  
բարձրաձայն:

Ստեղծվել էր այնպիսի լարված դրութիւն, յերբ  
մարդիկ ժամ առ ժամ նորութիւններ և անակնկալ-  
ների յեն սպասում...

Այսուհանդերձ մարդիկ արագորեն տարածվող  
լուրերի նկատմամբ միևնույն զգացումներն ու խոհերը  
չէին ունենում: Բուրժուազիան և սպիտակ բանակում  
սպա գավակներ ունեցող ընտանիքները, խոշոր անա-  
տերերը, առևտրականները և նման այլ մարդիկ սար-  
սափով էին մտածում վոչ մի լավ բան չխոսաացող  
վաղվա մասին: Նրանք թողնում էին իրենց կալ-  
վածքները, տուն ու տեղը և հավաքելով իրենց վոս-  
կեղեններն ու ակնեղենները, չվում էին հարավ: Բան-

վորական թաղերում և գյուղի չքավորների տներում, ընդհակառակը, ուրախություն եր տիրում: Այստեղ սպասողական վիճակ եր և մարդիկ մեծ հավատով լցված սպասում եյին կարմիր բանակի գալուն:

— Վերջապես ազատվելու յենք բուրժուազիայի ու նրանց պնակալեղների իշխանությունից:

Յեվ այնպես պարզ ու հստակ կարելի յեր մարդկանց դեմքերի վրա կարդալ նրանց տրամադրությունները, վոր փոքրիկ մանուկներն անգամ հասկանում եյին ստեղծված վիճակը:

— Լացդ կտրի՛ր, թե չե՛ բուլչեիկները կլսեն ու կզան քեզ կտանեն... Յերեխան լռում եր:

Մի այլ տեղ յերեխաները խաղում են.

— Յես հրամանատարն եմ, գուք ել կարմիր հեծելազոր: Առա՛ջ, մա՛րջ. մե՛կ-յե՛րկու... կը՛-բա՛կ...

Յերկու հակառակորդ բանակներ կային ուղմածակատում, յերկու հակառակորդ աշխարհներ սպիտակների թիկունքում:

Որեցոր կրկնապատկվում եյին սպիտակների խրատություններն ու զնդակահարությունները. մարդկանց կախելը սովորական յերեռոյթ եր դարձել:

Ուժեղանում եր հսկողությունը. լրտեսները վրխատում եյին ամեն տեղ: Գաղտնի աշխատող բուլչեիկներից շատ-շատերը բռնվել եյին: Բռնվել եր նաև Ալեքը՝ քաղաքի բուլչեիկների ղեկավարներից մեկը, վորին Յաման տեսել եր իրենց սենյակի կիսախավարում, հոր ձերբակալության դիչերը: Ասում եյին, վոր նրանց և նախապես բանտարկվածներին պետք ե հանձնեն զինվորական դատարան, վորի գատավճուի համար բավական են նույնիսկ կասկածանքները:

Ալյոշկինն Յամային կարգադրեց այլևս թուուցիկներ չտարածել, վորովհետև այդ գործն արդեն չափազանց վտանգավոր եր դառնում:

— Ճիշտ ե, — ասաց նա, — մենք հիմա շատ քիչ

ընկերներ ունենք, վորոնք կարողանային դրանով զբաղվել, բայց քեզ ու Ֆիլիպպին վերահաս վտանգի մեջ գցել չեմ կարող:

Եմման այնքան եր ընտելացել այդ գործին, վոր կարծես այլևս չեր կարող առանց թուուցիկներ տարածելու կամ Առաքելի և Ալյոշկինի մի այլ հանձնարարությունը կատարելու մի որ անցկացնել:

— Յես վոչ մի վտանգից չեմ վախենում, ավելի զգուշ կլինեմ և ինձ հետ վոչինչ չի պատահի: Յես գիտեմ քաղաքի ու շրջակայքի ամեն մի ծակ ու ծուկը և կկարողանամ խուսափել վտանգից: Յեվ ավելի վրտասուություն ստանալով իր իսկ խոսքերից, ավելացրեց, — չե՞ վոր հասակավոր ընկերների համար այժմ ավելի վտանգավոր ե թուուցիկներ տարածելը: Յեթե յես ել, Ֆիլիպպն ել տանը նստենք, ապա ո՞վ պիտի դրանով զբաղվի:

Ալյոշկինը գիջեց. — Եմման ճիշտ եր ասում:

— Լա՛վ, վոր այդքան անվախն ես, մի քանի որ ել զբաղվիր դրանով: Միայն ավելի զգուշ:

Դեպքերն արագ իրար եյին հաջորդում: Մթնուլորտն ելեկտրականանում եր: Գիչերվա խաղաղության մեջ մոտակա գյուղերում արդեն լավում եյին թնդանոթաձողության հեռավոր ու խուլ ձայները:

Եմման ու Ֆիլիպպը սովորականի նման փողոցից փողոց են անցնում և թուուցիկներ փակցնում: Ֆիլիպպը վերցրել եր հսկողի և զգուշացնողի դերը. Եմման պատն եր սոսնձում ու թուուցիկ փակցնում:

Յեվ ահա մի որ, յերբ Ֆիլիպպը ուշադիր դիտում եր անցորդներին, նրան թվաց, վոր մի կին մի քանի անգամ իր աչքովն ե ընկնում: Սկզբում, ցանկանալով ոտուզել իր կասկածը, նա Յամային վոչինչ չասաց: Նա ամեն մի նոր փողոց մտնելիս աչալուրջ դիտում եր: Այդ կինը 100-150 քայլ հեռավորության վրա հետևում ե իրենց:

— Եմմա, մեզ հետևում ե մի կին: Մտի՛ր հարևան

քաղը թուուցիկներն ու սոսնձի շիշը նետիր մի ապահով տեղ և վերադարձիր: Յերբ նա յերևա անկյունում, յես այնպես ցույց կտամ, վոր իբր թե դու պատի ներս կորացող անկյունում կանգնել ես և յես քեզ հետ խոսում եմ: Շտապի՛ր:

Եմման առանց շիտթվելու և առանց մի վայրկյան կորցնելու հեռացավ ու վերադարձավ կարճ ժամանակից հետո:

— Արդե՛ն:

Ճանապարհին Ֆիլիպպը գետնից մի բան վերցնելու պատրվակով կռանում եր և նայում, թե արդյոք այդ կինը շարունակո՞ւմ է հետևել իրենց:

Կինը հետևում եր:

— Ի՞նչ անել:

— Պետք է հետքը կորցնել տալ: Անցնենք զանազան աղմկոտ փողոցներով, քաղաքից դուրս գանք և գնանք տուն: Այդ աղմկոտ փողոցներում նա մեր հետքը պետք է վոր կորցնի:

Այդպես ել արին:

Սակայն քաղաքից դուրս գալիս նրանք նկատեցին հետապնդող կնոջը:

Լրտեսուհին իրենցից վարպետ եր:

— Իսկ ինչո՞ւ չի բռնում, չե՞ վոր նա կարող եր պատահած առաջին վրասիկանին հայտնել և մեզ բռնել տալ, — զարմացավ Ֆիլիպպը:

— Ուրեմն նա ուզում է մեր տեղն իմանալ, — ճիշտ յեզրակացրեց Եմման:

— Ստիպված պիտի լինենք ճանապարհը շատ յերկարացնել: Պետք է դուրս գալ ճանապարհից, թեքվել հյուսիս, մտնել խիտ անտառը, նրան այնտեղ թողնել և ծավալներից անցնելով հասնել գյուղ: Դու, Եմմա, կարող ես գիշերել մեզ մոտ:

— Ճիշտ ես ասում Ֆիլիպպ, ուրիշ ճար չկա: Մուխը չի վախեցնի մեզ, իսկ գայլեր չկան: Պետք չէ

շտապել: Իրիկնամուտին նրան կթողնենք անտառում և այնտեղ թող մեզ վորոնի վորքան սիրտը կուզի:

Գոհ իրենց վճռից և ապահով, վոր վոչ մի անակրնկալ չի պատահի, նրանք շարունակեցին ճանապարհը:

Հեռվից նրանց հետևում եր լրտեսուհին:

— Կանգնեցե՛ք: Չչարժվե՛լ:

Եմման ու Ֆիլիպպը հանկարծակի յեկած և տարակուսանքով ու վախով կանգնեցին: Նրանց մոտեցավ հրացանավոր մի զինվոր:

— Սլեքսա՛նդր, — կանչեց նա, — հեռվում յերեվացող կնոջը աչքաթող չանես:

Ֆիլիպպն ու Եմման տեսան, վոր իրենց մոտեցող զինվորը խոսում է քիչ հեռվից յեկող մի ուրիշ զինվորի հետ, վորին իրենք չէյին նկատել:

Առաջին զինվորը կրկին դիմելով Ֆիլիպպին ու Եմմային հարցրեց.

— Ո՞վ եք, ո՞ւր եք գնում:

— Մենք գնում ենք Սաղուվայա գյուղը, — պատասխանեց Եմման:

— Ձեր բռնած ուղղությամբ այդ անունով գյուղ չկա. ճիշտն ասեցեք, վորտեղից եք գալիս և ուր եք գնում:

— Մենք գալիս ենք քաղաքից. մուրավեցինք և ճանապարհը կորցրինք. յեթե դու ճանապարհը գիտես, — դիմեց Ֆիլիպպը զինվորին, — մեզ ցույց տուր:

Եմման գնում եր զինվորին: Նա զարմանքով տեսավ, վոր նրա զգեստը տարբերվում է քաղաքում տեսած զինվորական համազգեստներից. ուսադիրներ ել չկային:

— Իսկ դուք ո՞վ եք, — հարցրեց նա:

— Ի՞նչ համարձակն եք, — պատասխանեց զինվորը: Դուք ձեր մասին լուծում եք և ուզում եք իմ մասին իմանալ: Այ թե ով եմ յես: Չինվորը ձեռքը յերկարեց

դեպի փափախը և ցույց տվեց նրա բրդի մեջ կիսա-  
ծածկված աստղը: Կարմիր բանակային չե՞ք տեսել:

Եմման նոր նկատեց թավամազ փափախի վրա հա-  
զիվ նկատվող աստղը:

Յերկու ընկերների՝ Եմմայի և Ֆիլիպպի թաղուն  
վախին փոխարինեց զարմանքն ու տարակուսանքը:  
Նրանց ուրախությունն ավելացավ, յերբ տեսան մո-  
տեցող լրտես կնոջն ու նրա հետևից յեկող յերկրորդ  
կարմիր բանակայինին, վորին առաջին կարմիր բա-  
նակայինը Ալեքսանդր եր անվանել:

Եմման ու Ֆիլիպպն իրար ընդհատելով սկսեցին  
առաջին կարմիր բանակայինին պատմել, թե ովքեր են  
իրենք և ով է մոտեցող կինը: Կարմիր բանակայինը  
ընդհատեց նրանց խոսքը:

— Պեռք ե շտապել. այստեղ խոսելու ժամանակ  
չկա: Կխոսեք հրամանատարի հետ: Ե՛յ, դուք յերի-  
տասարդ ընկերներ և դու, համեստափայլ որիորդ,  
քայլեցեք այն ուղղությամբ, ինչ յես ցույց կտամ:  
Յես և Ալեքսանդրը, իբրև ձեր խոնարհ ծառաներ, հե-  
տևելու ենք ձեզ: Իմացե՛ք, հրացանները լցված են և  
մենք կկարողանանք բլթակը քաշել, յեթե մեկն ու  
մեկը փախչելու փորձ անի:

— Դեպի ձա՛խ: Քայլ առա՛ջ:

Յերբ կարմիր բանակայինը յերկու ընկերներին ու  
լրտեսունուն կարգադրեց կանգնել, նրանց առաջ  
անսպասելիորեն, կարծես գետնի տակից բսնելով,  
հայտնվեցին մի խումբ զինված մարդկանց անորոշ  
կերպարանքներ:

Թեև մութն էր, սակայն կարելի յեր տեսնել, վոր  
նրանց համազգեստը միատեսակ չէ: Մի քանիսը հա-  
պել էյին կաշվե կիսավերարկուներ, ուրիշները անգ-  
լիական շինել, ինչպիսին հազնում են սպիտակ զին-  
վորները, մի յերկուսի վրա նավաստի շորեր են, իսկ  
մեկը նույնիսկ քաղաքացիական վերարկու յե հագել:

Եմմային, Ֆիլիպպին և լրտեսունուն առաջնոր-  
դեցին մի փոքրիկ անակ, վորն առաջ յեղել է անտա-  
ռապահի տուն:

Ծխահալած լամպը շատ քիչ էր լուսավորում այն  
փոքրիկ սենյակը, վորի մեջտեղում, քարտեզներով ու  
թղթերով ծածկված սեղանի առաջ նստել էր դեղին  
կաշվե վերարկու հագած, սևաթույր աչքերով ու  
թուխ խոպոպներով մի յերիտասարդ:

Նա առաջապահ զնդի հրամանատարն էր:

Կարմիր բանակայինը նրան զեկուցեց իր և իր ըն-  
կերոջ հետազոտության արդյուքների մասին:

Հրամանատարն ուշի ուշով զննեց ներս մտնողնե-  
րին և սկսեց հարցաքննել: Նա համբերությամբ լսեց  
Եմմային ու Ֆիլիպպին, վորոնք ամենայն մանրամաս-  
նությամբ պատմեցին իրենց մասին, նկարագրեցին  
իրենց հետ բռնված կնոջ հետապնդումը և լրիվ պա-  
տասխանեցին հրամանատարի բոլոր հարցերին:

— Իսկ դուք իսկապես լրտեսո՞ւմ եյիք այս փոք-  
րիկ հերոսներին, — կնոջը դիմեց հրամանատարը:

— Այո՛, — լիտի համարձակությամբ և ծխախոտի  
ծուխ բաց թողնելով պատասխանեց կինը. — ինձ դրա  
համար վճարում են: Յեթե դուք ավելի վճարեք՝ ձեզ  
կծառայեմ:

— Ուրեմն դու չես ամաչում լրտեսությամբ  
գրադվելուդ համար: Մի՞թե ազնիվ աշխատանքով չես  
կարող ապրել:

— Ազնիվ աշխատանքով մկներն անդամ չեն ապ-  
րի: Իսկ յես այժմ սիրում եմ փող, փող և փող: Ա՛յ,  
այդ փողի շնորհիվ յես ամենալավ ծխախոտն եմ  
ծխում: Չեյի՞ք կամենա:

Լրտեսունին ծխախոտի տուփը պարզեց հրամանա-  
տարին:

Հրամանատարն արհամարհական հայացք գցեց  
ծխախոտի տուփի և նրա տիրոջ վրա:

— Այդ միայն ձեր աշխարհում՝ բուրժուազիայի  
և նրա պնակալեզների աշխարհումն է: Իսկ մենք աշ-  
խարհը կփոխենք այնպես, վոր ամեն տեղ տիրի աշ-

խառափորը, աղնիվ և ստեղծագործող աշխատանքը: Ինչ կհամենայն՞ք աղնիվ աշխատանքով ապրել այդ նոր աշխարհում:

— Յես մատուցող եյի ճաշարանում: Այժմ հոգնել եմ այդ «աղնիվ» կոչված աշխատանքից՝ տերերիդ սպասարկելուց: Ասենք այդ աշխատանքին յես այժմ պետք էլ չեմ գա: Յես կորցրել եմ իմ գեղեցկությունը ձեր՝ հրամանատարների շնորհիվ. իսկ տիրողը կարմիր է թե ձերմակ՝ ինձ համար միևնույնն է:

Լրտեսուհին շարունակում էր ծխել:

— Ինչ շիտթում ես ձերոնց և մեզ, — հանգիստ շարունակեց հրամանատարը, — յես փականագործ եմ, բանվոր. այդպիսիքն են նաև մեր կարմիր բանակայիններն ու մեր հրամանատարները: Իսկ քո հետագա վիճակը կորոշի հեղափոխական դատարանը:

Հրամանատարը գիմելով առաջին կարմիր բանակայինին կարգադրեց.

— Ընկեր Սիմա, տար սրան: Ասա՛, վոր կերակրեն: Վաղը կուղարկենք շտաբ՝ դատարանին հանձնելու համար: Իսկ դուք, — հրամանատարը գիմեց Եմմային ու Ֆիլիպպին, — իմ լավ ու քաջ փոքրիկներ, — կգիշերեք ինձ մոտ. վաղը կմտածենք ինչ անել:

Ֆիլիպպը անհաստատ քայլերով ընդհուպ մոտեցավ հրամանատարի սեղանին: Հրամանատարը հասկացավ, վոր նա բան է ուզում ասել:

— Ի՞նչ կա, տղաս:

Ֆիլիպպի աչքերը վառվում էին. նա շիտթված ու բառերը կուլ տալով ասաց.

— Ուզում եմ մնալ ձեզ մոտ. յես վաղուց ուզում եմ կարմիր բանակային դառնալ: Յես բոլոր հրամանները, ընկեր հրամանատար, լավ կկատարեմ:

— Իսկ մայրդ ի՞նչ կասի. հրամանատարը գորովանքով լի հայացքն ուղղեց Ֆիլիպպին, վորից Ֆիլիպպն ավելի վստահություն ստացավ և պատասխանեց.

— Յեթե կարմիր բանակը մտնի մեր գյուղը, մայրս կուրախանա, ինձ էլ բան չի ասի:

— Լավ, լավ, վաղը կտեսնենք ինչ ենք անելու. այժմ ընթրեք և այս միակ թախթի վրա քնեցեք:

Հրամանատարն այլևս ուշադրություն չզարձրեց նրանց վրա: Նա խորատուզված իր մտքերի մեջ, մատիտը ձեռքին, շարունակեց քարտեզի վրա ինչ վոր նշումներ անել:

Եմման ու Ֆիլիպպն առանց շորերը հանելու պառկեցին:

Ամբողջ որը վտաքի վրա լինելով ու հոգնած, ինքն իրեն արդեն կարմիր բանակային յերեակայելով, ուրախ՝ Ֆիլիպպն իսկույն քնեց:

Սակայն Եմմայի քունը չեւ տանում: Նա փակեց աչքերը և փակ կոպերի տակից տեսավ ինչպես Պավել պապը դուրս յեկավ տնակից, լարված ուշադրությամբ անշարժ կանգնեց շրջապատի լուսթյան մեջ, հետո անհանգիստ վերադարձավ սենյակը, նստեց անկողնին ու անշարժ մնաց: «Յե՞ղձ պապիկ, — հուզվեց Եմման, — նա ամբողջ գիշերն անհանգիստ ինձ է սպասելու: Այ թե իմանար վորտեղ եմ յես...»:

Եմման վերհիշեց այդ որվա անցուղարձը: Հիշեց Ալյոշիկինին, Առաքելին, Սիմային, հպարտություն զգաց այն բանի համար, վոր կարողացել են չբռնվել և դեռ ավելին, մի լրտեսուհու կարմիրների ձեռքն ընկնելու առիթ են տվել:

Եմմայի մտքերի ու զգացումների հոսանքը դարձյալ կանգ առավ հոր բանտարկության վրա: Բանտը, բանտը...

— Ի՞նչ է լինելու հորս հետ: Կսպանե՞ն մինչև քաղաքը կարմիրների կողմից գրավելը: Մի՞թե յեւք չկա: Ո՛ր, վորքան կուղենայի իսկական մեծ լինել, դառնալ զորավար, հենց հիմա արշավել քաղաքի վրա և առաջին հերթին, այո, առաջին հերթին Չարդել բանտի դռները, ազատել հորս ու մյուս հեղափոխական բանտարկյալներին:

Եմման ապրեց այս վոզեչնչող ցանկության իրականացումը: Ահա նա ձի հեծած արշավում է. կարմիր բանակայինների զորագունդը հետևում է իրեն և ձի-

ընդ որոշումները խոտովում ե գիշերվա անդորրը: Ահա և քնած քաղաքը: Նա ընտրում ե բանտը տանող ամենակարճ ճանապարհը... նա հրամայում ե շրջապտել բանտը և ինքը մի խումբ կարմիր բանակայինների հետ մոտենալով գլխավոր դռանը կարգադրում ե դուռը բաց անել: Մերժում են ներսից: Նա հրամայում ե կրակել և դուռը ջարդել: Ահա և ջարդված զանից ներս են մտնում, սպանում բանտապետին ու սպաներին և բաց անում կամերաների դռները:

— Հայրի՛կ...

Յմման հորը տեսնելով մոռացավ, վոր զորավար ե. նա փոքրացավ, դառավ առաջվա Յմման իր հաղթանդամ հոր մոտ և ընկավ նրա կրծքին:

— Հայրի՛կ...

— Խեղճ աղջիկ, բանտարկյալ հորն ե յերազում տեսնում:

— Իսկ ո՞վ ե նրա հայրը, — հարցրեց, մի ուրիշ ձայն:

Հրամանատարը համառոտ պատմեց:

— Ասում ես մեքենավար Անդրեյ Սի՞լին:

— Այո՛, ինչ կա վոր:

— Յես ճանաչում եմ նրան: Տարիներ առաջ աշխատում եյի այս կողմերի յերկաթուղային գծի վրա: Նա խոհուն ու համարձակ մարդ եր ու հին բոլշևիկ: Պետք ե նրան ազատել:

Մի պահ լուսթյուն տիրեց:

— Դժվար թե դա հաջողվի: Նրան պետք ե համարել հեղափոխության հաղթանակի համար զոհված մարտիկներից մեկը: Սպիտակները քաղաքից հեռանալուց առաջ չեն մոռանա բանտում նրանց կոտորել, — ասաց հրամանատարը:

— Պետք ե նրանց հանկարծակիի բերել և գրոհել անսպասելիորեն, — լսվեց առաջին խոսակցի ձայնը:

Քայց ափսոս, դիվիդիայի գլխավոր ուժերը դեռևս հեռու յեն:

— Հենց բանն ել դրանումն ե. նրանք միայն յերեք-չորս օրից այստեղ կլինեն: Ինչ արած, առանց զոհերի հաղթանակ չկա, — յեզրափակեց յերրորդ ձայնը:

Ծանր լուսթյունն ընդհատեց հրամանատարը.

— Գնանք ստուգենք պոստերը:

Կոչիկների ձայնը նվազեց հեռվում:

Սենյակի համրության մեջ Յմման լսում եր իր սրտի բաբախումը և հուզված մտածում հրամանատարի և նրա ընկերների խոսակցության մասին:

Յմմայի զուսպ հեկեկանքը խոտվեց շրջապատի լուսթյունը և տարածեց անլուր մի թախիժ նրա հոգում:

Արեգակի շողերն անցնելով ծառերի մերկ ճյուղերի և լուսամուտների միջով, գուրգուրեցին Յմմայի վոսկեգույն խոպոպները և արթնացրին նրան:

Սենյակում մարդ չկար:

Յմման վերհիշեց նախորդ իրիկվա խոսակցություններն ու իր վորոշումը և շտապեց հրամանատարին գտնելու:

Հրամանատարին վորոնելիս նա տեսավ Ֆիլիպպին, վորը կարմիր բանակայիններով շրջապատված հիացմունքով դիտում եր ու զննում զենքերը: Ֆիլիպպն ուշադրությամբ լսում եր բանակայինների բացատրությունները հրացանի տարբեր սխտեմների, ատրճանակների և այլ զենքերի ու նրանց գործածության յեղանակների մասին: Նա յերբեք այդքան շատ և բազմատեսակ զենք չեր տեսել և մոռանալով ամեն ինչ, տարվել եր դրանցով: Վորքա՛ն նա կուզենար ունենալ մի թույտ, նագան կամ կարճափող կարբերին...

— Յե՛վ կունենա՛մ: Չե՞ վոր յես այսօրվանից կարմիր բանակային եմ, — մտածում եր նա:

Եմման հրամանատարին գտավ կարգադրություններ անելիս և մոտեցավ նրան:

— Ընկեր հրամանատար՝ յես ձեզ հետ ուզում եմ խոսել:

— Ասա՛, աղջիկս, յես լսում եմ:

— Յես ուզում եմ առանձին խոսել:

— Ինչո՞ւ: Ի՞նչ, կարևոր բա՞ն պիտի ասես:

— Այո՛, կարևոր բան:

Հրամանատարն ուշադրությամբ նայեց Եմմային և տեսելով նրա դեմքի մտազբաղ և լուրջ արտահայտությունը՝ պատասխանեց.

— Լավ. այդ դեպքում քիչ սպասիր:

Յերբ նրանք առանձնացան, Եմման պատմեց, վոր ինքը լսել է հրամանատարի և իր ընկերների խոսակցությունը, վոր ինքը, ինչպես արդեն ասել էր, ճանաչում է քաղաքի բուլճեիկներից մի քանիսին, գիտե, վոր նրանք զենք ունեն և պատրաստ է ողնելու նրանց հետ կապ ստեղծելու գործում: Նա հուզված խոսեց հորն ու մյուս բանտարկյալներին ազատելու իր ծրագրերի մասին, վորի վերաբերյալ նա շատ եր մտածել նախորդ գիշերը:

— Յեվ վերջապես, — վախենալով վոր հրամանատարը հավանություն չի տա իր ասածին շարունակեց Եմման, — յեթե կարմիր բանակը յեկել է ազատելու բանվորներին և գյուղացիներին, ապա ուրեմն պետք է բանտարկյալներին ևս ազատի սպիտակների ձեռքից:

Հրամանատարին թվում էր թե իր հետ խոսողը մի հատակավոր ու փորձված մարդ է և վոչ թե այն փոքրիկ 12 տարեկան աղջիկը, վորը նստած է իր կողքին:

Թեև առաջապահ զնդի հրամանատարին հաջողվել էր կապվել քաղաքի բուլճեիկյան կազմակերպության հետ, սակայն նա ավելորդ չհամարեց գործի զնել Եմմայի վողեորությունն ու հեղափոխությանը ծառայելու պատրաստակամությունը: Նա նկատի ունեցավ նաև այն, վոր ստեղծված պայմաններում՝ խրամատներ, անցաթուղթի անհրաժեշտություն, խիստ

հսկողություն և այլն, շատ անգամ պատանիները կարող են անվտանգ կերպով անել այնպիսի բաներ, ինչ մեծահասակները չեն կարողանա:

Շարունակելով սկսված խոսակցությունը, նա Եմմային տվեց մի քանի հարցեր ևս:

— Իու գիտե՞ս, վոր քաղաքի բուլճեիկները թագցրած զենք ունեն, — գիմեց նա Եմմային:

— Այո. մի քանի տեղով:

— Իսկ բուլճեիկները շա՞տ են, ինչ էս կարծում...

— Այդ չգիտեմ. սակայն չե՞ վոր անկուսակցականներն էլ նրանց կողմեն:

— Այդ ճիշտ է: Յես կկապվեմ մեր շտաբի հետ, վորոչ բաներ կիմանամ և հետո քեզ կուղարկեմ քաղաք: Սակայն իմացիր, վոր այս գիշեր սպիտակներն սկսել են խրամատներ վորել քաղաքի հյուսիսային կողմը և քաղաքը մտնելը հեշտ չի լինի:

— Այդ վոչինչ. ինձ վրա վոչ վոք չի կասկածի և յես քաղաք կմտնեմ ուրիշ կողմից:

— Քա՛ջ աղջիկ էս: Յեթե գործն էլ կարողացար լավ կատարել, գովասանքի կարժանանաս:

— Յես գովասանքի համար չե վոր ուզում եմ ձեզ ողնել. չե՞ վոր յես էլ բուլճեիկ եմ, բուլճեիկի աղջիկ, — պատասխանեց Եմման:

— Կեցցե՛ս Եմմա. յեթե բոլոր պատանիները քեզ պես լինեն, ապա սպիտակներին մենք ավելի շուտ կջարդենք:

Նույն օրն Եմման գաղտնի հանձնարարությամբ դնաց քաղաք: Վորպեսզի նա ճանապարհին շատ չհողնի, մի կարմիր բանակային, հրամանատարի կարգադրությամբ ձի վերցրեց, Եմմային առավ իր դավալը և տարավ մինչև այն գիծը, վորտեղից զենն արդեն վտանգավոր էր դառնում:

Եմման հաջողությամբ կատարեց ծրագրի առաջին, սակայն դեռևս փոքրիկ մասը:

Պարեկները բոլոր քաղաք մտնողներինց ու զուրա-  
յեկողներինց անցաթուղթ եյին պահանջում, սակայն  
Եմմային իբրև փոքրիկ աղջկա թողեցին «իր առեւ-  
տրական մորաքրոջ մոտ գնալու»: Եմման, արտա-  
քուստ անտարբեր, ուշադրութեամբ դիտում եր խրա-  
մատները, ստուգում, թե արդյոք վորքան են սպիտակ  
գործածասերը և թե ինչքան թնդանոթներ կան:

Եմման գնաց Ալյոշկինի տունը: Ալյոշկինը լսում  
եր Եմմային, սակայն չէր կարող հավատալ: Եմմայի  
յերկար հավատախցումներից հետո նա Միմայի մի-  
ջոցով կանչեց Առաքելին ու յերկու ուրիշ ընկերների  
և Եմմային առաջարկեց նորից և մանրամասն կրկնել  
իր ասածները: Եմման ամեն ինչ ասեց հրամանատարի  
անունից:

Այլևս վոչ մի կասկած չունենալով Եմմայի բերած  
տեղեկութիւնների ճշտութեան, Եմմայի նվիրվածու-  
թեան ու զազանապահութեան վերաբերմամբ, նրանք  
խորհրդակցեցին և վորոշումները հայանեցին Եմմա-  
յին՝ կարմիր բանակի առաջատար գնդի հրամանատա-  
րին հաղորդելու համար: Նամակ գրել և հանձնել Եմ-  
մային տանելու՝ վտանգավոր եր: Եմման լարված ու-  
շադրութեամբ լսում եր նրանց և աշխատում ամեն մի  
նախադասութիւն նույնութեամբ պահել մտքում:

Անհրաժեշտ համարվեց, վոր Եմման նույն օրը  
վերադառնա տուն և պապին հանգստացնի: Այլապես  
պապը, չնայած իր կուրուսթեան, կարող է գնալ գյուղ  
կամ պատահական անցորդների հարցնել Եմմայի մա-  
սին և ավելորդ, գուցե նաև վտանգավոր կասկածներ  
առաջացնել:

Տանը գիշերելուց հետո, արեւածագին Եմման ճա-  
նապարհ ընկալ գեպի կարմիրների բանակատեղը, գե-  
կուցեց հրամանատարին և վերադառնալով քաղաք,  
նոր ու վերջնական հրահանգներ բերեց:

Չարմանալի կերպով ամեն ինչ հաջող եր գնում:  
Եմման ճիշտ ժամանակին և անթերի կարողացավ կա-  
տարել իր վրա գրված հանձնարարութիւնը: Նա ան-  
սահման համարձակ եր դառել, ինքնավստահ և միև-

նույն ժամանակ զգուշ: Եմման, ավելի քան առաջ,  
ուշադրութիւն չէր դարձնում իր սննդի և հանգստի  
վրա: Նույնիսկ պապի նկատմամբ հարկ յեղած խնամ-  
քըն այլևս չէր տանում: Նրա առաջ այժմ ավելի կա-  
րեւոր խնդիր եր գրված և պետք եր պատվով կատա-  
րել հանձն առած գործը:

Յերբ Եմման հիշում եր իր առաջվա անհամար-  
ձակութիւնը, մտաբերում եր բանտ գնալու օրվա իր  
յերկչոտութիւնն ու լացը, ծիծաղում եր ինքն իր  
վրա, ա՛յն Եմմայի վրա, վորը մի քանի ամիս առաջ  
ապրում եր փոքրիկ տնակի փոքրիկ հոգսերով: Ո՛ր,  
այժմ նա շատ նոր բաներ է տեսել, շատ բան հասկա-  
ցել: Մի քանի ամսվա ընթացքում նա աճել, հասու-  
նացել է ու փոփոխվել այնպես, վոր կարծես առաջվա  
Եմմայից ել բան չի մնացել:

Սպիտակները վերջին ամիսների ընթացքում շա-  
րունակ նահանջելով և անչափ մեծ գոհեր տալով,  
կորցրել եյին իրենց ինքնավստահութիւնը: Նրանք  
գյուղը գյուղի հետևից, քաղաքը քաղաքի հետևից  
թողնում ու հեռանում եյին հարավ: Սակայն այս քա-  
ղաքը, վորը ռազմական մեծ նշանակութիւն ունեցող  
յերկաթուղային հանգույց եր, նրանք հանձնել չէյին  
ուզում: Անհրաժեշտ եր այստեղ սահմանադիժ ստեղ-  
ծել, կարմիրների առաջխաղացումը դադարեցնել և  
ժամանակ շահելով բանակը լրացնելու համար թի-  
կունքում նոր ուժ հավաքագրել: Սակայն հակառակ  
սպիտակների ցանկութեան, բանակը շարունակվում եր  
կազմալուծվել: Մի կողմից տված գոհերը, մյուս  
կողմից բոլշևիկների սնդուլ աշխատանքը սպիտակ-  
ների բանակում ու թիկունքում, յերրորդ կողմից  
ահարկու չափերի հասնող դասալքութիւնը և վերջա-  
պես աշխատավորական լայն մասսաների թշնամական  
վերաբերմունքն՝ իրենց գործը տեսել եյին: Սպիտակ  
բանակը կազդուրելու խիստ միջոցները հակառակ ար-

դշուներն եյին տալիս, իսկ նրանց կառավարութեան խոստումներին այլևս վոչ վոք չէր հավատում:

Կարմիր բանակում հակառակն եր դրությունը: Հախուռն թափով պատռելով սպիտակներն ճակատը, նրանց մի քանի զորամասերն ամբողջապես տրորելով, կարմիր բանակն արագընթաց արշավում եր հյուսիսից: Աշխատավոր ազգաբնակչությունը բուռն ուրախութեամբ եր դիմավորում կարմիր բանակին և ամեն տեղ տասնյակ, հարյուրավոր ու հազարավոր յերիտասարդներ, մի մասը սպիտակ բանակի նախկին դասալիքներ, միանում եյին նրան:

Իարձը եր կարմիր բանակայիններն տրամադրությունը: Անխուսափելի զոհերն ավելի եյին բորբոքում նրանց հեղափոխական ու մարտական ուժն ու թափը: Նրանք անվեհեր ու ինքնագոհ կերպով եյին կովում և հավատում եյին իրենց զաղափարների ճշմարտութեանն ու հաղթանակին: Կարմիր բանակի հաղթանակն ապահովում եր մանավանդ հրամանատարական կազմի և կուսակցութեան անխոնջ ու նվիրված աշխատանքը, վորի շնորհիվ կարմիր բանակայինները, չնայած ռազմական միջերջների պակասութեան, կովի դաշտ եյին նետվում և շատ անգամ ուղղակի զոտեմարտի մեջ մտնում գազազած, սակայն հուսալքված սպիտակների հետ:

Ահա այս պայմաններում պետք եր դրավելեր այն քաղաքը, վորտեղ բանտարկված եյին Եմմայի հայրն ու բազմաթիվ այլ հեղափոխականներ:

Քաղաքն առանց յերկար կովի ու առանց մեծ արյունահեղութեան դրավելու ծրագիրը վերջնականապես մշակվեց ու հաստատվեց: Պետք եր արագացնել հարձակումը, սպիտակներին ամբնալու ժամանակ շտալ, շփոթ ստեղծել նրանց մեջ ու միասնական արագ գրոհով վերցնել քաղաքը:

Նշանակված օրը, մարտի 24-ին, յերեկոյան ուշ ժամին սկսվեց հարձակումը քաղաքի վրա:

Հարձակումն սպիտակներն համար անսպասելի յեր: Նրանք ի հարկե գիտեյին, վոր կարմիր բանակն արագ առաջանում ե և վաղ թե ուշ սլիտի գրոհի քաղաքի վրա: Սակայն չեյին սպասում, վոր նրա առաջատար զորամասերը մարտի 24-ին ի վիճակի կլինեն հարձակման անցնել: Անակնկալի առաջ կանգնած լինելով, սպիտակ բանակի շտաբը կարգադրեց քաղաքում գտնվող բոլոր ռազմական ուժերը կենտրոնացնել քաղաքի հյուսիսային կողմը, վորտեղից միայն կարող եր սպասվել հակառակորդի հարձակումը:

Հրետանու ուժեղ կրակն առաջին ազդանշանը յեղավ: Կարմիրները նախապես լավ ուսումնասիրելով սպիտակների դիրքերը, անխափան կրակում եյին, ավերում ու խուճապ ստեղծում սպիտակների խրամատներում ու խրամատների շուրջը: Նրանք աշխատում եյին քաղաքի վրա չկրակել՝ խաղաղ ազգաբնակչութեանը չվնասելու համար: Սակայն կռիվը հենց քաղաքի մոտ լինելու պատճառով պատահական թնդանութային արկեր ընկնում եյին քաղաքի այս կամ այն մասում և ավերմունք առաջացնում: Բնակչությունը հատկանալով, վոր կովի ժամանակ կարող ե զոհեր տալ, վերնահարկերից քաշվեց նկուղներն ու ներքնահարկերը: Քաղաքի փողոցները դատարկվեցին բոլորովին:

Հրետանին գործում եր ավելի ու ավելի բորբոքված: Գնդացիների կրակի ճայնը, վորը լսվում եր թնդանութային արկերի պայթյունների ընթացքում, հիշեցնում եր կովի մոտ լինելը: Յեվ զարմանալի բան: Առաջին ըոպենների վախն ու սարսափը շատ արագ անցավ: Հրետանու ամեն մի հռնդյունը, վորն սկզբում դող եր ստեղծում ամեն մի մանուկի և կովի շմասնակցող հասակավորների մեջ՝ այլևս չէր ազդում: Ներքնահարկերում պատսպարվածներից ամեն մեկը հույս ուներ, վոր անձամբ իրեն ու իր հարազատներին դժբախտություն չի պատահի: Այս հույսն, իհարկե, թուլանում եր, յերբ մոտակայքում արկի պայթյուն եր լսվում և մեռնողների կամ վիրավոր-

վտճներն խուլ ձայնն եր իրենց հասնում: Տարորինակ չեր, վոր յերբ նման դեպք եր պատահում կենտրոնական մասում, վոչ վոք իր թագստոցից դուրս չեր գալիս, չեր մտածում ողնել իր հարևանին:

Այլ եր ծայրամասերում: Չնայած փողոց դուրս գալու խստիվ արգելանքին, այնուամենայնիվ քաղաքի այդ մասերում ապրողները, վորոնք առավելապես բանվորներ էին և այլ չքավոր քաղաքացիներ, դուրս էին գալիս իրենց տներից, հարկ յեղած դեպքում ողնություն էին ցույց տալիս, վիրավորներին փոխադրում քիչ թե շատ ապահով համարվող բնակարան, կապում վերքերը, հուսադրում: Պատասպարողներն ու պատասպարվողներն այստեղ ե՛լ ավելի էին մոտենում մեկ մեկու, իրենց ցանկություններն ու մտքերն էին բաժանում փոխադարձաբար և մտերմանում այնպես, կարծես մի քանի տարի շարունակ ընկերություն արած լինեյին:

Վոյջ քաղաքի խաղաղ ազդարնակչությունը լարված սպասողական դրություն եր ապրում: «Արդյոք վորտե՞ղ ե կռիվը», «վորտե՞ղ ընկավ սուլացող արկը», «ինչո՞ւ չլավեց պայթյունը», «ո՞վ կհաղթի» և նման այլ հարցեր էին տալիս իրար և դատողություններ անում ջնելու կարոտ, բայց ամբողջ գիշերը չքնելու պատրաստ բնակիչները: Նրանցից վոչ վոք չգիտեր ի՛նչ դրություն ե քաղաքում, վոչ վոք չգիտեր ի՛նչպես ե ընթանում կռիվը և ի՛նչ յելք կունենա նա...

Այն ժամանակ, յերբ ուժեղանում եր թնդանոթաճգությունը քաղաքի հյուսիսում, Պյոտր Ալյոշկինը, Առաքելն ու ընկերները վերջին պատրաստություններն էին տեսնում:

Վորոչված եր գիշերվա ժամի 1-ին յերեք տարբեր խմբերով հարձակվել բանտի, հեռազրատան և յերկաթուղային կայարանի վրա: Ապստամբության գինված ժասնակիցները շուրջ յերեք հարյուր հոգի էին: Կա-

րելի յեր, իհարկե, շատ ավելի մեծ թափով բանվորներ ներգրավել այս գործում. սակայն զենքի պակասությունը և ապստամբության նախապատրաստումն սպիտակներից ամեն կերպ գաղտնի պահելու անհրաժեշտությունն ստիպում եր այժմ սահմանափակվել այդ թվով: Ինչ խոսք, վոր ապստամբության ծավալմամբ հազարներ կղային միանալու ընդհանուր գործին:

Յերկաթուղային կայարանի գրավումն ամենից շվիարը պիտի լիներ, վորովհետև սպիտակներն իրենց փախուստի ճամբան լավ էին պաշտպանում: Կայարանի գրավումը ղեկավարելու յեր ինքը՝ Պյոտր Ալյոշկինը: Գործի հաջողության համար նա առաջին հերթին իր հետ վերցրեց դեպոյի բանվորներին, վորոնք լավ ծանոթ էին յերկաթուղային կայարանին: Բանտի գրոհումը ղեկավարելու յեր Առաքելը, իսկ հեռազրատանը՝ մի ուրիշ ընկեր:

Զինված ապստամբները վորոչված ժամին մեկմեկ, յերկու-յերկու հավաքվում էին նախապես նըշված կետերում: Հարձակման ազդանշանը պիտի տար դեպոն՝ յերեք հատվող ազդաչափներով:

Գիշերվա ժամի 1-ին, ազդանշանից հետո, հրացանաձգությունն սկսվեց կայարանում, հեռազրատան շուրջը, վորը քաղաքի կենտրոնական մասումն եր և բանտի չորս կողմը տարածված հրապարակում:

Սպիտակների շտաբի համար անհասկանալի յեր դրությունը: Հեռախոսներն ամեն կողմից հաղորդում էին բոլլեիկների հանկարծակի հարձակման մասին: Նման անազանդերստացվում էին նաև այնպիսի կետերից, վորտեղ վոչ մի հարձակում չկար: Շտաբի պետերն անձամբ անաբեկվեցին. կարող էին թակարդն ընկնել: Պեսք եր կայարանն ինչ գնով ուզում ե լինի, պաշտպանել: Կարդազրվեց ճակատից մի գունդ յետ կանչել և ուղարկել կայարան, վերջինս ապստամբներից մաքրելու համար: Այս ծրագիրն իրագործվեց: Կայարանի վրա հարձակվող ապստամբները, վորոնք քիչ եր մնացել հաղթահարեյին կայարանի պահակա-

գործի դիմադրութիւնը, անհամեմատ փոքրաթիւ լինելով, նահանջեցին ամբողջ մի գնդի առաջ և բաժանականին զոհեր տալով, ստիպվեցին միառժամանակ հեռանալ: Կայարանը մնաց սպիտակների ձեռքը:

Սակայն այս հաղթանակը շատ թանկ նստեց սպիտակներին: Ճակատից մի գունդ վերցնելու և քաղաքն ուղարկելու լուրն արագ անցավ խրամատից խրամատ և ուժեղացրեց սպիտակների լքված տրամադրութիւնը: Ձինվորներից շատերն ոգտվելով գիշերային խափարից մեկ առ մեկ սկսեցին փախչել կովից, ուսադիրները պոկել ու դեն գցել և թագնվելով մի վորևե տեղ, սպասել կարմիր զորագնդերի հարձակմանն ու հաղթանակին: Խրամատներում իրար յետևից սկսեցին յերևալ սպաների գնդակահար գիակներ: Թշնամո՞ւ գնդակն ե գիպել նրանց, թե՞ սեփական զինվորների գործն է դա: Սպաներից վոչ վոք փորձ չեր անում ատուգել դեպքը: Նույնը կարող էր պատահել իր հետ:

Սպիտակների շտաբի ստացված տեղեկութիւնները վոչինչ լավ բան չէին ասում: Հյուսիսից, կարմիր զորամասերը գրոհ սկսելու նշաններ էին ցույց տալիս: Սակայն նկատելի չէր, վոր նրանք ամբողջ ճակատով հարձակում կատարելը հետաձգում էին, հավանաբար սպասելով գիշերային խափարի նոսրանալուն: Դիրքերն իրենց ձեռքում պահելու և կարմիրների սպասվող ընդհանուր հրաձակումը յետ մղելու վոչ մի հույս չկար: Սպիտակների շտաբը կարգադրեց հրետանու կրակն ուժեղացնելով հանդերձ, զորամասերը մաս առ մաս յետ կանչել և ուղարկել կայարան այնպես, վոր հակառակորդը չնկատի: Նախապես պատրաստած գնացքներն սպասում էին մեկնելու կարգադրութիւն:

Եմման բակը դուրս գալու մի պատրվակ գտնելով հազնվեց ու դուրս յեկավ Սիմայի սենյակից: Նրա համար դժվար էր կատարել Ալյոշկինի կար-

գադրութիւնը և տանից դուրս չգալ: Որվա ընթացքում նա ահագին ճանապարհ էր կտրել ու հոգնել էր: Մեծ զգուշութիւն բանեցնելով, անցնելով միայն իրեն ծանոթ տեղերով, նա գնացել էր կարմիրների բանակատեղը և առաջատար գնդի հրամանատարի վերջին կարգադրութիւններն էր բերել: Այդ կարգադրութիւնների համաձայն Ալյոշկինն ու Առաքելը վերջին պատրաստութիւններն էին տեսել: Եմման շատ լավ պատկերացնում էր ուժերի բաշխումը, գիտեր՝ ո՞վ ինչ է անելու, վո՞ր ժամին պիտի սկսվի գրոհը: Այն գիտակցութիւնը, վոր կարմիր բանակի առաջատար գնդի և ընդհատակյա բոլշևիկյան կազմակերպութիւն կապը նա շատ հաջող է պահպանել — չոյում էր նրա ինքնասիրութիւնը: Եմման մեծացել, շատ էր մեծացել իր իսկ աչքում:

— Յե՛վ ինչո՞ւ այս բոլորից հետո, — փողոցից փողոց անցնելով մտածում էր Եմման, — Ալյոշկինն ինձ դարձյալ փոքրիկի տեղ է դնում և պատվիրում է տանը մնալ առանց մի վորևե գործի: Ի՞նչ է, յես վախեցնում եմ կովից: Վո՞չ. յես Պետյային շատ հարգում եմ ու սիրում, նրա պատվերները սիրով ու ճշտութեամբ կատարել եմ ու կկատարեմ, բայց այս անգամ յես նրան չէյի կարող լսել: Յես ուզում եմ տեսնել բանտի գրավումը, ժամ առաջ գրկել հայրիկիս: Չե՞՞ վոր յես յերկար ամիսներ յերազել եմ այդ մասին... «Գուցե յես միայն իմ հո՞գտն եմ քաշում, միայն իմ և իմ հոր մասին մտածում, ցանկանում, վոր հայրսնատի տանը, ինձ սիրի և յես այլևս վոչնչի մասին չմտածե՞մ», ինքն իրեն հարց էր տալիս Եմման ու պատասխանում. — վո՞չ, վո՞չ, վո՞չ յես ինքնասեր չեմ. բայց խո՞մ հորը և այն ել հեղափոխական հոր սիրելը յեսասիրութիւնն չի՞: Թող հայրս վողջ մնա, ազատվի, թող դարձյալ որ ու գիշեր նվիրվի հեղափոխութեան գործին, թող ամիսներով տուն չգա. յես չեմ տխրի դրա համար: Իսկ յեթե հայրս այնտեղ, բանտում չլինի՞...

Ու նա ցուրտ գիշերին, կիսախավար փողոցով ա-

բազ անցնում եր: Նա յերբեմն միայն կանգ եր առնում ապահով մի տեղում, լարում ուշադրութիւնը և վտանգ չտեսնելով, նույն անշուշտ քայլերով, բայց ավելի արագ առաջ շարժվում:

Ս.հա և բանտը սանող այն փողոցները, վորոնք նրա համար սովորական և այսորվանից թերևս հարագատ են: 15-20 րոպե ևս և նա կլինի բանտի հրապարակում:

Փողոցով անցնող սպիտակ վաշտերն արագ ծածկըվում էյին խավարում: Նրանք Եմմայի վրա ուշադրութիւն չդարձրին և վոչ վոք նրան չկանգնեցրեց: Իհարկէ Եմման պատրաստի պատասխան ունի,— հնարել է մոր հանկարծակի հիվանդանալու և շտասք բժշկի կանչելու անհրաժեշտութեան մի պատմութիւն, վորով պիտի բացատրեր արդելված Ժամին իր փողոց դուրս գալը:

— Յերեխա յեն համարում ինձ,— մտածեց Եմման ու ծիծաղեց:

Նա չգիտեր վոր սպիտակներն արդեն փախուստի յեն գիմում և րոպե առաջ շտապում են կայարանի բնէն փրկութեան միակ կետը, վորը նույնպես կարմիրների ձեռքն անցնելու վտանգի տակ եր:

Բայց ինչո՞ւ հրացանաձգութեան ձայներն այլ կողմերից են գալիս և բանտի կողմում լուռթյուն է: Բանտը վերցրել են արդեն, թե՞ անհաջողութեան նշան է այս լուռթյունը: Ո՛ր, ավելի լավ է գնդացիների ճարճատյունն ու գնդակների տարափը, քան այս անխոս ու շարագուշակ լուռթյունը:

Եմման մոռացավ ամեն մի զգուշութիւն և հեծի-հեծի վազելով՝ հասավ բանտի հրապարակը:

Հրապարակում մարդ չկար: Հանգցրած եր բանտի շենքի լուսավորութիւնը: Միայն յերկաթացանցի պատուհաններից մեկ-մեկ յերևում եր թույլ և շուտ հանգչող կրակ: Այդ բանտարկյալներն էյին լուցկի վառում իրենց կամերաներում: Բանտի պատերի յերկաթութեամբ շրջող պահակները չէյին յերևում: Փակ դարպասի մոտ նույնպես պահակ չկար:

Տարակուսանքը պատեց Եմմային: Մոտենա՞լ գոան: Վո՛չ, պետք է սպասել: Իսկ ո՞ւր են մերոնք: Պետք է գտնել նրանց: Եմման անցավ բանտի հրապարակի վրա նայող բնակելի շենքերի մոտով: Հրապարակ դուրս յեկող մի փողոցի անկյունում նրան մոտեցավ քաղաքացիական շորեր հագած բայց զինված մի մարդ: Նրանից 20-25 քայլ հեռու կանգնած եր մի ուրիշը:

— Մերոնցից կլինեն,— մտածեց Եմման ու չոսպասելով նրա հարցին՝ ինքը հարցրեց Առաքելի մասին:

— Ի՞նչ Առաքել. ո՞վ է նա:

— Ձեր պետք. յես պետք է նրան տեսնեմ:

Հավաստիանալով վոր այս փոքրիկ աղջիկը ոտաք չէ և յեկել է Առաքելին տեսնելու, քաղաքացին ցույց տվեց հաջորդ գուգահեռ փողոցը:

— Այնտեղ կգտնես նրան,— ասաց նա:

Առաքելն իր թիկնեղ հասակով կանգնած եր խմբի մեջ և խոսում եր յերեք ուրիշ ընկերների հետ:

— Բարև, քեռի Առաքել,— մոտեցավ ու Առաքելի ձեռքը բռնեց Եմման:

— Եմմա՞. դու ինչ գործ ունես այստեղ:

— Յես...

— Լավ, Եմմա ջան. գիտեմ ինչն է քեզ բերել այստեղ: Վոտդ խեր լինի: Առաքելը շուկով ինչ վոր բան ասաց ընկերներին ու փաղաքշանքով գրկեց Եմմային:

Հարց ու փորձից Եմման իմացավ, վոր Առաքելը խորհրդակցելով ընկերների հետ, վորոշել եր ավելի զգուշ վարվել և բանտը գրավել առանց մեծ զոհերի:

Առաքելի կարգադրութեամբ ամենից առաջ կտրել էյին բանտի հեռախոսի և ելեկտրական լույսի լարերը: Հետո հատուկ պատվիրակ եր ուղարկվել բանտ և բանտապետին առաջարկվել եր բաց անել բանտի դռներն ու առանց մեկի մազին անգամ գիպչելու ազատել բանտարկյալներին: Միաժամանակ զգուշացված եր, վոր փորձ չարվի մարդ ուղարկելու շտաք կամ այլ

տեղ: Բանտից դուրս յեկողը լողջ կամ սպանված մնալու յեր հրապարակում: Անձնատուր լինելու և բանտարկյալներին ազատելու առաջարկին պատասխանելու համար տրվել եր կես ժամ ժամանակ:

Կես ժամը վաղուց արդեն անցել եր, պատասխան չկար: Ինչպես կարելի յեր յենթադրել՝ բանտայետը չէր շտապում: Նա սպասում եր քաղաքի հյուսիսում սկսված կռիւ յելքին: Բանտայետ սպան իր համազումներին դեմ եր համարում կամավոր կերպով հանձնվելն ու բանտի դռները բաց անելը: Յե՛վ վերջապես դա կարող եր իրեն թանկ նստել, յեթե հաջորդորն իշխանութունը դարձյալ մնար սպիտակների ձեռքում: Նա վորոշեց ամրացնել դռները և սպասել: Բանտայետը յենթադրում եր, վոր «խռովարարները» փոքրթիվ են և չեն համարձակվի հարձակվել բանտի վրա:

Այնինչ Առաքելն ու իր ընկերներն արդեն անհամբերութեան նշաններն եյին ցույց տալիս:

Պետք է սկսել:

Առաքելը վերջին կարգադրութուններն արեց:

Ապստամբների մի խումբ ոգտվելով մութից, լռութեամբ և աննկատ անցավ հրապարակը և ապահով հասավ բանտի պատերին:

Հարձակման աղդանշան տրվեց:

Մնացած ընկերներն ևս առաջ անցան և գրոհե սկսվեց:

Ազատարարների ուժեղ կրակի տակ պահականոցի պատուհանները դատարկվեցին: Մի խումբ ընկերներ գզուշութեամբ մոտեցան դարպասի ձախ կողմում գտնվող գրասենյակի պատուհաններին և նավթ շաղ տվին պատուհանների վրա ու կրակ տվին: Հրդեհը դանդաղորեն սկսեց բորբոքվել: Մի ուրիշ խումբ, զինված նիզեքով ու ծանր մուրճերով, ամեն բոպե գոհվելու վտանգի տակ, ջանում եր խորտակել յերկաթապատ դարպասը:

Հրացանաձգութունն ուժեղանում եր յերկուստեք:

Ներսից լսվում եր բանտարկյալների խուլ աղաղակն ու կամերաների դռներին հասցրած հարվածները: Պատուհանների ապակիներն աղմուկով ջարդվում եյին:

— Բացե՛ք դռները... մա՛հ ազատութունը խեղդողներին...

— Տղերք, հեռո՛ւ: դարպասից. հեռացեք գրասենյակի մոտից...

Մի ուժեղ պայթյուն իլացրեց հրացանաձգութեան և մարդկանց ձայնը: Առաջին պայթյունին հետևեց յերկրորդը, յերրորդը: Դարպասը թեքվեց մի կողքի. բայց չընկավ ու չբացվեց: Գրասենյակի ներսում սաստկանում եր բոցն ու ծուխը:

— Տղերք առա՛ջ, — լսվեց Առաքելի ձայնը:

Յերկաթանիգերն ավարտեցին նոնակի գործը. դարպասը խորտակվեց և նրա կեսն աղմուկով ընկավ գետին:

— Ընկերներ՛ք, առա՛ջ:

Հրդեհի բոցերով լուսավորված վառվում են կրովողների դեմքերը:

Տասնյակ տարիներ դաժան ու համր կանգնած պատերը պլլլում են կրակի բոցերի մեջ:

Բանտի պատերի տակ և հրապարակում ընկած վիրավորները մահվան տագնապն են ապրում.

— Անիծվածներ՛ք...

Եմման բոցերի լույսի տակ տեսավ Առաքելին: Առաքելը տատանվելով գետին գլորվեց:

Եմման վաղեց դեպի նա: Առաքելի բաց կրծքից հոսում եր կարմիր արյունը...

— Եմմա. սա քո մկրտութունը յեղավ... վերջին բարևս... համբույրս տուր իմ լա՛վ Ալիկին... Անդրեյին...

Առաքելը ճիգ արեց բարձրանալ. նա իր մուրր աչքերը դարձրեց դեպի բանտը.

— Տղե՛րք, առաջ...

Եմման առաջին անգամ տեսավ մահը ու ցնցվեց. ճուրտ եր:

— Ուռուա՛... .

Բանտարկյալները խուռն թափով դուրս խուժեցին  
բանտի դարպասից և հրճվանքը դեմքերին գրկա-  
խառնվեցին ծանոթ ու անծանոթ ընկերների հետ:

Այս ե մեր վերջին մարտը  
Հաղթական ե անպարտ...

Ազատարարները, բանտարկյալներն ու ժողովուր-  
դը շրջապատեցին սպանվածներին ու վիրավորներին:  
Եմման չհեռանալով Առաքելի սառչող դիակի մո-  
տից, իր թաց աչքերի վորոնող հայացքն ուղղեց բան-  
տարկյալներին.

— Հայրի՛կ...

Եմման փաթաթվեց հոր վզովը ու լացեց վորպե՛ս  
փոքրի՛կ, փոքրի՛կ մի աղջիկ:

— Ե՛մմա, զավակս... վորքա՛ն մեծացել ես,  
ինչպե՛ս հասունացել...

Արևերի պայթյուններն արդեն հարավից եյին լըս-  
վում, իսկ «Ինտերնացիոնալի» խրոխտ յեղեղները  
բանտի հրապարակից բարձրանալով, շառագունող  
արեգակի ճառագայթների թևերին նստած՝ տարած-  
վեցին հեռո՛ւ, հեռուները:

Պատ խմբ. Մ. Դուրգարյան  
Տեխ. խմբ. Ան. Գասպարյան  
Սրբազրիչ՝ Հ. Մանուկյան

Գլավլիտի լիազոր՝ Ա.— 4074. Հրատ. № 4714,  
Պատվեր 211, տիրաժ 3500,  
Թուղթ 62X94, տպագր. 4,5 մամ.  
Մեկ մամ. 24480 նշան.

Հանձնված ե արտագրության 21 օգոստոսի 1938 թ.  
Ստորագրված ե տպագրության 25 հոկտեմբերի 1938 թ.

Պետհրատի I տպարան, Յերևան, Լենինի 65

« Ազգային գրադարան



NL0408348

13536

գրք 1 n. 50 4.

М. ПИРУМЯН  
МАЛЕНЬКАЯ ЭММА  
ГИЗ АРМ. ССР ЕРЕВАН